

ՀԵԹՈՒՄ Բ-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XIII Դ.)

1842 թ. Վենետիկում, հայագետ Ավգերյանը Հեթում Պատմիչի անունով հրատարակեց մի փոքրիկ ժամանակագրություն¹։ Հայագետները մինչև հիմա այն վերագրում էին Հեթում Պատմիչին և Ավգերյանի հրատարակության բնագիրն էլ համարում էին նրա սկզբնական բնագրի մի տարբերակը։ Սակայն Մասնադարանի № 663 ժողովածուի 246ա—252բ էջերում գտնվող այդ ժամանակագրության մի նոր բնագիրը, որն Ավգերյանի հրատարակության բնագրի նկատմամբ ունի բազմաթիվ կարևոր շեղումներ և նրանից բավական ընդարձակ է, հնարավորություն է տալիս նոր լույսի տակ քննել ինչպես ժամանակագրության սկզբնական բնագրի, այնպես էլ հեղինակի հետ կապված հարցերը²։

Նկատի ունենալով վերոհիշյալ հարցերի պարզաբանման կապակցությամբ այս նոր բնագրի բացառիկ գերը, ինչպես և նրա բովանդակած մի շարք կարևոր տեղեկությունները, որոնք բացակայում են ժամանակագրության հրատարակության բնագրում, անհրաժեշտ գտանք այն վերահրատարակել։ Առաջարկվող բնագիրը ըստ էության տարբերություն է և այն այդպես էլ կանվանենք, որի № 663 ժողովածուի բնագիրը կնշանակենք Ա։ Տարբերության Ավգերյանի հրատարակության և Ա բնագրի համեմատությունը երևան հանեց մի շարք հետաքրքիր փաստեր. նախ՝ Ա բնագրից բազմաթիվ վկայություններ բացակայում են Ավգերյանի հրատարակություն բնագրում։ Այդ բանը նկատելի է 1233 թվից սկսած։ Ա քնագրում գտնում ենք բավական հետաքրքիր վկայություններ, որոնք վերաբերում են Կիլիկյան հայկական թագավորական իշխանության դեմ ներքին, ֆեոդալական կենտրոնախույս ուժերի պայքարին և որոնք բացակայում են հրատարակության բնագրից. օրինակ 1293 թվի տակ կարդում ենք.

¹ «Ժամանակագրությունը երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան սլատմութեանց հայ, ֆրանկ և ասորի, շարագրեալ սլարոն Հեթումոյ տեառն Կոռնիկոսոյ և արար զայս բանք ի թուին Հայոց Շնն և յամի մարգեղութեան Տեառն ՌՄՂՁ» (1296), որը հրատարակվել է «Պատմութիւն թաթարացոյն»-ի հետ մի կազմում։ Սույն աշխատության հայերեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը հրատարակված է էջ. Դյուլլորիեի կողմից, 1869 թ. «Recueil des Historiens des Croisades. Documents Armeniens», tome 1er, Paris, էջ 471—490։ Ժամանակագրությունը եվրոպական մի քանի լեզուներով նույնպես հրատարակված է։

² Այս մասին ղեկուցում կարդացվել է Հայկ. ՄՍՈՒ-ի Մինիստրների Սովետին կից Պետ. Զեռագրատան (Մատենադարան) IV գիտ. սեսիայի 1950 թ. սեպտեմբերի 29-ի նիստում։

«Դաւ եղև Հեղումոյ թագաւորն իւր իշխանացն, որք էին գլխաւորք պարոնայք, Հեղում Կոռիկոսոյ տէրն և իւր եղբայր Օշին Կանչոյն տէրն և բազումք իշխանացն Հայոց»:

Կամ՝

«Ի նոյն ամի (1296) դաւ եղև իշխանացն Հայոց, որք էին գլխաւորք պարոն Օշինն սինջալն, որդի պարոն Սմայաթայ Գունդոստապլին և պարոն Օշինն Բակուրեանց, որ էր ասպասալար դարպասին և այլ բազում իշխանք և ծիաւորք»:

Մեջ բերված օրինակներով չի սպառվում հրատարակության բնագրի թերի լինելու վրասար: Ավելին, վերջինիս մեջ չենք գտնում նաև 1233 թվից մինչև 1266 թիվը, 1268—1273 թ. թ., 1276—1279 թ. թ., 1285—1288 թ. թ. անդի ունեցող դեպքերի հիշատակումը և այլն: Սակայն, հետաքրքիրն այն է, որ հրատարակության բնագրում տեղ չգտած վկայությունները գերազանցապես վերաբերում են հեղինակի ժամանակակից դեպքերին:

Երկրորդ՝ Ա բնագրում հանդիպում ենք վկայությունների, որոնց մեջ հեղինակն ակնարկում է իր մասին, և որոնք նույնպես չենք գտնում հրատարակության բնագրում: Օրինակ՝ Կոստանդին Լամբրոնացուն հեղինակը համարում է իր պապը, իսկ Կիո Աննա թագուհուն՝ իր մայրը:

Երրորդ՝ տարեգրության և հրատարակության և Ա բնագրի խորագրում նշված է, որ հեղինակը իր աշխատությունը կազմել է 1296 թվին: Եվ իսկապես, Ա բնագիրը վերջանում է ճիշտ 1296 թվին վերաբերող վկայությամբ, իսկ հրատարակության բնագիրը՝ 1307 թվին: Նշանակում է տարեգրության սկզբնական բնագիրը ավարտված է եղել 1296 թվին, իսկ հրատարակության բնագրի վերջին՝ 1307 թվի վկայությունը նրա սկզբնական բնագրին ավելացվել է հետագայում:¹

Չորրորդ՝ տարեգրության երկու բնագրերի խորագրերն էլ նշանակալի չափով տարբերվում են միմյանցից. այսպես, եթե հրատարակության բնագիրը ունի «Ժամանակագրությունք երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց հայ, ֆրանկ և ասորի շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ և արար զայս բանք ի թուին Հայոց Շնն² և յամի մարտիկութեան տեառն ՌՄՂԶ (=1296)» խորագիրը, ապա Ա-ն ունի «Համառօտ պատմութիւնն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց այսինքն ի Հայոց, ի Ֆռանկաց, ի Յունաց, ի Յասորոց գրեանց, աշխատութեամբ իմոյ ծառայիս Քրիստոսի աստուծոյ Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ ի թվականի Հայոց Չնն (=1296)» խորագիրը:

Համաձայն հրատարակության խորագրի, աշխատությունը կոչվում է ժամանակագրություն, մինչդեռ Ա բնագրի խորագրի համաձայն՝ «Համառօտ Պատմութիւնն ժամանակաց». բացի այդ, Ա բնագրում բացակայում է հրատարակության բնագրի «Երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ» հատվածը, իսկ Ա բնագրի «աշխատութեամբ իմոյ ծառայիս Քրիստոսի աստուծոյ Հեթմոյ

¹ Այնպես, հրատարակության բնագրի 1307 թվի վկայության մասին կարծիք է հայտնում, որ «...կամ ինքն մեր պատմիչն (Հեթում—Վ. Հ.) աւելացուցեր է, կամ ուրիշի մի յարեր է» (Հայագատում, մասն Ա, էջ 114): Ինչպես հիմա է պարզ դառնում, Հեթում Պատմիչին վերադրված ժամանակագրության սկզբնական բնագիրը 1296 թվից այս կողմ չէ անցնում:

² Տպագրական սխալ է պետք է լինի Չնն (=1296):

տեառն Կոռիկոսոյս հատվածի փոխարեն, հրատարակութեան բնագրում կարգում ենք «շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյս հատվածը: Ինչպես դժվար չէ նկատել, տարեգրութեան սկզբնական բնագրի վրայով օտար ձեռք է սահել և այն խմբագրել են: Քննութեան ենթակա երկու բնագրերի վերոհիշյալ տարբերութիւնները ցույց են տալիս, որ տարեգրութեան հրատարակութեան բնագիրը չի արտահայտում Հեթմոյ Պատմիչին վերագրված ժամանակագրութեան սկզբնական բնագիրը, ինչպես կարծում էին մինչև այժմ: Հետևապես **A** բնագիրը հանդիսանում է այն որոնելին, որն արտահայտում է տարեգրութեան սկզբնական բնագիրը: Այսպիսով, մեզ համար պարզ է դառնում, որ Հեթմոյ Պատմիչին վերագրված տարեգրութեան սկզբնական բնագիրը ենթարկվել է խմբագրման և հրատարակութեան բնագիրը հենց այդ խմբագրման արդյունքն է:

Երբ կարող էր առաջ գալ տարեգրութեան հրատարակութեան բնագիրը: Վերեւում արդեն նշել ենք, որ նրա խորագիրն ունի այսպիսի մի հատված. «Ժամանակագրութիւնք երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ», այսինքն՝ երեք հարյուր մեկ տարվա անցուդարձի համառոտ ժամանակագրութիւն: Այլ խոսքով, հրատարակութեան բնագիրն սկսվելով 1076 թվականից և ընդգրկելով 301 տարվա համառոտ պատմութիւն, նրա վերջին վկայութիւնը պետք է վերաբերվեր 1377 թվականին (1076+301=1377), սակայն հրատարակութեան բնագիրն սկսվելով 1076 թվականին Գաղիկ Բ. սպանութեան և վերջանալով 1307 թվականին վերաբերող վկայութիւններով, այն ընդգրկում է ոչ թե 301 տարվա պատմութիւն, ինչպես ազդարարում է հրատարակութեան բնագրի խորագիրը, այլ երկու հարյուր երեսուն մեկ տարվա անցուդարձ (1307—1076=231): Այստեղից կարելի է համազօրեմբային քանի եզրակացութիւններ, նախ՝ քննութեան ենթակա տարեգրութեան սկզբնական բնագիրը խմբագրվելուց բացի, շարունակվել է մինչև 1377 թվականը: Երկրորդ՝ հրատարակութեան բնագրի խորագրում շնայած նշվում է, որ ժամանակագրութիւնն ընդգրկում է 301 տարվա համառոտ պատմութիւն, իրականում այնտեղ ընդգրկված է 231 տարվա պատմութիւն: Հիմք ընդունելով խորագրի «երեք հարիւր և մէկ ամաց» հատվածը, կարող ենք եզրակացնել, որ, մի կողմից, հրատարակութեան բնագիրը թերի է,¹ իսկ մյուս կողմից, այն կարող էր հանդես գալ XIV դարի 70-ական թվերի վերջերին:

Սույն տարեգրութեան բնագրից բացի Մատենադարանում գտնվում են նաև նրա շորս այլ ընդօրինակութիւնները, որոնցից երեքը՝ ՔՔ 2037, էջ 145ա—146բ, 7841, էջ 303ա—306բ, 3079, էջ 215բ—221բ,՝ **A** բնագրի հետ ունեն այն հարաբերութիւնը, ինչ հրատարակութեան բնագիրը, միայն այն տարբերությամբ, որ սրանք վերջից շարունակվում են մի փոքր ավելի՝ Ք 2037 (Ե) և Ք 7841 (Ե) տարբերակները մինչև 1351 թիվը, իսկ Ք 3079 (Դ) տարբերակը՝ 1374 թիվը: Այդ պատճառով այս երեք տարբերակները քննութեան չենք ենթարկի:

¹ Սույն ժողովածուն ապագրութեան հանձնելուց հետո միայն իմացանք, որ հայագետ Մ. Պատկանյանը ես այդ կարծիքն է ունեցել (տես «Փորձ», 1880, № 1, հավելված, էջ 31):

² Տարեգրութիւնը գտնվում է ժողովածուի վերևում նշված Բ էջերում միայն, իսկ Ա էջերում գտնվում է ներսես Պալենցու թարգմանած Մարտիրոս Լեհացու հոմեական կայսերների և քահանայապետների ժամանակագրութիւնը:

Իսկ չորրորդ ընդօրինակությունը (E), որը գտնվում է № 5599 ժողովածուի 219ա—221բ էջերում, ինչպես A, այնպես էլ հրատարակության բնագրի համեմատությամբ ունի զգալի տարբերություններ:

Վերջինս A բնագրի նկատմամբ ունի հետևյալ շեղումները: Նախ՝ A բնագրից բազմաթիվ վկայություններ նույնպես բացակայում են E բնագրում, սկսած 1190 թվից: Այնուհետև E բնագրում բացակայում են 1196 թ., 1198—1204 թ. թ., 1205—1206 թ. թ., 1213—1216 թ. թ., 1217—1219 թ. թ., 1227—1265 թ. թ., 1270 թ., 1272—1273 թ. թ., վերաբերող վկայությունները, ինչպես նաև ուրիշ մասեր վկայություններ:

Երկրորդ՝ հակառակ A բնագրի, E բնագիրը 1296 թվից հետո նույնպես շարունակվում է, հասնելով մինչև 1345 թիվը:

Երրորդ՝ E բնագրում բացակայում է A բնագրի խորագրի միայն հեղինակին վերաբերող՝ «Աշխատութեամբ իմոյ ծառայիս Քրիստոսի աստուծոյ Հեթմոյ տեառն Կոտիկոսոյ» հատվածը:

Վերոհիշյալ տարբերությունները ցույց են տալիս, որ E բնագիրը, որը զգալի շեղումներ ունի ոչ միայն A փնագրից, այլև հրատարակության բնագրից, մեզ ներկայանում է տարեգրության մի նոր խմբագրություն:

Երբ կարող էր առաջ գալ E բնագիրը: E բնագրի ժողովածուն (№ 5599) ընդօրինակվել է 1347 թվին, Կիլիկիայի Ուրէլ գյուղում, Ստեփանոս քահանայի ձեռքով: Եվ որովհետև տարեգրության բնագրում հիշատակված դեպքերը հասնում են մինչև 1345 թիվը, այստեղից դժվար չէ եզրակացնել, որ տարեգրությունն ամենայն հավանականությամբ խմբագրել է և ապա շարունակել ընդօրինակության գրիչ՝ Ստեփանոս քահանան, 1347 թվին:

Այսպիսով, ինչպես հիմա է պարզ դառնում, քննության ենթակա տարեգրությունը մեզ հասել է երեք խումբ բնագրերով, որոնցից A բնագիրը, որը կառուցվածքի և ընդգրկած նյութի ծավալի տեսակետից առաջին է տարեգրության լրիվ բնագիրը, իսկ հրատարակության ինչպես և B, Γ, E բնագրերը հանդիսանում են նրա երկու տարբեր խմբագրությունները:

Սակայն, արդյո՞ք հավաստի է մինչև հիմա գոյություն ունեցող այն վարժիքը, որն ի դեպ հայագետներից ոչ ոք կասկածի չի ենթարկել, թե՞ քննության ենթակա տարեգրության հեղինակը Կոտիկոսի իշխան Հեթում Պատմիչն է: Այդ վարժիքը հավաստի չէ և պետք է վերանայվի: Ուշագրավ ինչպիսի՞նք «մաստեր նն մեզ հնարավորություն տալիս, առաջ քաշել այդ հարցի վերանայման խնդիրը»:

Նախ՝ մեր ձեռքի տակ գտնված տարեգրության բնագրերից հինգի՝ A, B, B, Γ, Δ խորագրերում նշված է, որ նրա հեղինակը Կոտիկոսի իշխան Հեթումն է (հայտնի է Պատմիչ անունով): Վերոհիշյալ բնագրերից ամենից հինը № 2037 (B) ժողովածուն է, որն ընդօրինակվել է 1421 թվին: Իսկ E բնագիրը, որն ընդօրինակվել է 1347 թ., այսինքն տարեգրությունը կազմվելուց 50 տարի հետո, խորագրում չի պահել հեղինակի անունը: E բնագրի խորագիրը բերում ենք ամբողջությամբ. «Համառօտ պատմութիւն ժամանակաց հօսքեալ ի զանազան պատմութեանց, այսինքն»՝ ի հայ, ի ֆռանկ և ի յուն և ի յասորի գրեանց [ի թոսա]կանիս Հայոց Չեծ»:

Այսպիսով եղած բնագրերի ամենից հին (E, XIV դարի 1-ին կես) խորագրում հեղինակի անունը չի հիշված և այդ պատճառով մենք չգիտենք թե՞ հեղինակը ով է, Հեթում Պատմիչը, թե՞ մեկ ուրիշը:

Երկրորդ՝ վերևում անցողակի նշեցինք, որ տարեգրության հեղինակը Աբնադրում իր մասին երկու անգամ հիշում է: Այդ վկայությունները քննենք ավելի մանրամասն:

1. «Ի թվականիս Հայոց ՈհԲ (=1250) և յունիսի ԻԹ (=29) կատարեցաւ ի սորայ պապն իմ և տէրն Լամբրոնի»:

2. «ՉԼԴ (=1285) փոխեցաւ ի Քրիստոս ամենագովելին հոգով և գեղեցկական տեսօք, առաքինի մայր իմ, Կեռան Թագուհին Հայոց, յոգոստոսի ԻԹ (=29): (Երկու ընդգծումը մերն է — Վ. Հ.):

Ո՞ւմ է ակնարկում հեղինակը առաջին վկայության «պապն իմ և տէրն Լամբրոնի» արտահայտությամբ: Խոսքը վերաբերում է Կոստանդին Լամբրոնացուն, որը Հեթումյան թագավորական տան նկատմամբ անհաշտ գիրք ունենալու պատճառով Հեթում Ա.-ի հրամանով սպանվեց 1250 թ.:

Ինչպես դժվար չէ նկատել, վերևում բերված օրինակներից տարեգրության հեղինակը հղել է Կոստանդին Լամբրոնացու թոռը և Կեռան (իմա Կիո Աննա) թագուհու որդին: Այս վկայությունները չէր կարող Հեթում Պատմիչը գրել, որովհետև Կիո Աննա թագուհին նրա մայրը չէր, ինչպես և Կոստանդին Լամբրոնացին նրա պապը չէր:

Ինչպես հայտնի է, Կիո Աննա թագուհին, Հեթում Լամբրոնացու դուստրը և Կոստանդին Լամբրոնացու թոռը Լևոն Բ. թագավորի (իշխել է 1270—1288 թթ.) կինն էր: Այս երկուսից ծնվել էր Հեթում Բ. թագավորը (իշխել է ընդմիջումներով 1288—1307 թ. թ.): Վերջինիս համար արդեն հասկանալի է դառնում չպապն իմ» և «առաքինի մայր իմ» արտահայտությունները:

Երրորդ՝ բրիտանական թանգարանի (Լոնդոն) հայերեն ձեռագրերի ցուցակում, ձեռագրերից մեկի նկարագրության մեջ նկատեցինք, որ այնտեղ գտնվում է առաջարկվող տարեգրության Ա տարբերակի մի ուրիշ բնագիր, որի խորագրում հեղինակի անունը Կոռիկոսի իշխան Հեթումի (իմա Պատմիչ) փոխարեն նշված է Հովհաննես սպասավոր: Բերում ենք խորագիրն ամբողջությամբ. «Համառօտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց, աշխնքն ի Հայոց, ի Ֆռանկաց, ի յունաց, յասորոց աշխատութեամբ իմո ծառայիս աստուծոյ Յովհաննէս սպասաւոր բանին ի թվիս Հայոց ի Չեծ»¹ Այնուհետև բերված է բնագրի սկզբի մի փոքրիկ հատվածը, որը տառացիորեն ծածկում է քննության ենթակա տարեգրության Ա տարբերակի համապատասխան հատվածին: Վերոհիշյալ փորագրի, Չեռ. ցուցակում մեջ բերված և տարեգրության Ա տարբերակի համապատասխան հատվածների համեմատությունը մեզ բերեց անսխալ այն հզրակացության, որ բրիտանական թանգարանում գտնվում է մեզ հետաքրքրող տարեգրության Ա բնագրի որևէ օրինակը, որը դժբախտաբար վերջից թերի է և ընդհատվում է 1270 թվականով: Այդ ձեռագիրը ընդօրինակվել է մոտավորապես 1400 թվին:²

Սակայն ո՞վ է վերևում հիշված «Յովհաննէս սպասաւոր»-ը, ի՞նչ կապ կարող է լինել նրա և Հեթում Պատմիչի անվան միջև: Ոչ մի: Ինչպես հայտնի է, Հեթում Բ. թագավորը, 1293 թ. հրաժարվում է գահից, և այն հանձնում հղբորը՝ Թորոսին, իսկ ինքը դառնում կրոնավոր, աշխարհական անունը փոխում և

¹ «A catalogue of the Armenian manuscripts in the British Museum», London, 1913, էջ 291—292:

² Նույն տեղ, էջ 292:

կողմում է Հովհաննես: Այսպիսով, տարեգրության բրիտանական բնագրում հիշված «Յովհաննէս սպասատր»-ը, նույն ինքը Հեթում Բ թագավորն է, Կիւ Աննա թագուհու որդին, Կոստանդին կամբրոնացու թոռը: Հետևապես, առաջարկվող տարեգրության հեղինակը իրականում եղել է Հեթում Բ. թագավորը:¹

Որ մեր այս ենթադրությունը ճիշտ է, կարող է հաստատել մի այլ անուղղակի հանգամանք ևս: Մատենադարանի № 1898 ժողովածուի 123ա—167բ էջերում (ժողովածուն մագաղաթ է, նրա հնությունը վերաբերում է XIII—XIV դարերին) գտնվում է Հեթում Պատմիչի կողմից 1296 թ. թարգմանված Խորենիկոսը, որն ունի հետևյալ խորագիրը՝ «Պատմութիւն Խորենիկոսին զոր նշնաստ ծառայա Քրիստոսի Հեթումս տէր Կոտիկաւոյ փոխեցի ի ֆռանգ գրոց ի թուին Հայոց Չեծ»:

Առաջարկվող տարեգրության տեղեկությունների կեսից ավելին (խաչակիրներին վերաբերող մասը և այլն) գտնում ենք Խորենիկոսի մեջ: Հետևապես իրավացիորեն ենթադրում ենք, որ վերջինս Հեթում Բ.-ի համար հանդիսացել է սկզբնաղբյուր, այդ մանրամասներեն ցույց կտանք ներքևում: Սակայն այստեղ անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ առաջարկվող տարեգրության հեղինակը եթե Հեթում Պատմիչը լիներ, նա ինչու պետք է Խորենիկոսի թարգմանության տարում՝ 1296 թ. կազմեր մի աշխատություն, որի տեղեկություններն Կեսից ավելին վերցնեն իր թարգմանած նյութից: Բնական է ենթադրել, որ Խորենիկոսի Հեթում Պատմիչի թարգմանությունը (եթե ոչ նրա եվրոպական բնագիրը) Հեթում Բ-ն իր տարեգրության համար օգտագործել է, որպես սկզբնաղբյուր:

Վերոհիշյալ մի շարք փաստերը կարծում ենք մեր հավաստիացման պակասություն չեն թողնում: Այսպիսով, շնայած A բնագրի խորագրում ևս հեղինակի անունը նշվում է Հեթում Պատմիչ, սակայն հեղինակը իրականում եղել է Հեթում Բ թագավորը (նույն ինքը Հովհաննես):

Իսկ այն հարցը, թե տարեգրությունն ինչպե՞ս է վերագրվել Հեթում Պատմիչին, ատանձին կարևորություն չունի պատմագրության համար և ենթադրությունների մեջ դեգերելու ասպարեզն այստեղ բավական ընդարձակ է: Սակայն նշենք, որ այդ կարծիքը գալիս է հնից, որովհետև այն գոյություն ունի տակավին XV դարի առաջին քառորդում: Ըստ երևույթին ժամանակակից Հեթում անունների նույնությունը շփոթել է մարդկանց և տրադիցիա դարձել մինչև հիմա:

Տարեգրության A բնագիրը լինելով ուշ ժամանակի՝ 1724 թվի ընդօրինակություն, պարունակում է մի շարք բառերի աղավաղումներ, որոնց իմաստը հնարավոր է հասկանալ հրատարակության և E բնագրերի օգնությամբ. օրինակ՝ A քնագրում կարդում ենք՝ «Ջնոր մարդոյ աշխարհն» փոխանակ՝ «զնորմանգո աշխարհն», «շինեցաւ Զաստել Բլրին բերթանքն փլեցոյց» փոխանակ՝

¹ Տարեգրության մեջ Հեթում Բ-ն մի քանի անգամ անդրադառնում է իր մասին (երբ է ծնվել, թագավոր դարձել և այլն), սակայն այդ վկայությունները գրել է ոչ թե առաջին դեմքով, այլ երրորդ: Սյու հանգամանքը չի կարող վերոհիշյալ մեր հավաստիացման վրա ստվեր դնել, որովհետև երրորդ դեմքով գրելը դրական ձև է, որին հաճախ դիմել են մեր մատենագիրները: Միայն Գունդատարը իր մասին առաջին դեմքով գրելու հետ միաժամանակ գրել է նաև երրորդ դեմքով. օրինակ՝ «Ի թուին 657 ծնաւ Սմբատ Գունդատարւն...» («Տարեգիրք», Փարիզ, 1859, էջ 116): «ՍԸ թագաւորահայրն պարոն Կոստանդին ու Սմբատ Գունդատարւն եկին, մտան ի Տաքսու...» (էջ 123) և այլն և այլն:

«շինեցաւ Զաստիլ Բլրինն բերդ Դամբլեցեց», «մեռաւ և թագաւորն ապաւնոց»... փոխանակ՝ «մեռաւ թագաւորն Սպանիոյ...»։ Ա բնագրում Ներսես Շնորհալու մահը պատճառ է 1173 թվի օգոս. 13-ին (ԺԳ) հինգշաբթի. սակայն 1173 օգոստոսի 13-ը կլինի ոչ թե հինգշաբթի, այլ երկուշաբթի, իսկ իրականում 1173 թվի օգոստոս ամսիս հինգշաբթին երը ընկնում են 2-ին, 9-ին, 16-ին, 23-ին և 30-ին։ Հետևապես Ներսես Շնորհալու մահը ընկնում է օգոստոսի 16-ին հինգշաբթի օրը. և իրոք տարեգրության Ե բնագրի համաձայն Ներսես Շնորհալին մահացել է 1173 թվի օգոստոսի 16-ին, հինգշաբթի օրը։ Այստեղ, ինչպես և նշված բառերում տեղ են գտել գրչագրական սխալներ։

Հեթում Բ-ն տարեգրության խորագրում գրում է. «հաւաքեալ ի զանազան պատմութեանց աշխնքն՝ ի հայոց, ի ֆռանկաց, ի յունաց, ի յասորոց գրեանց», այս նշանակում է, որ քննության ենթակա աշխատությունը զանազան աղբյուրներից համաքած մի գործ է, միայն այն առավելություններ, որ ժամանակագրության վերջին մասում տեղ են գտել հեղինակի ժամանակակից մի շարք դեպքերի հիշատակություններ, որոնք, չնայած խիստ համառոտ են, բայց արժեքավոր և հետաքրքիր տեղեկություններ են։

Ի՞նչ աղբյուրներ է ունեցել տարեգրության հեղինակն այն կազմելիս՝ 1296 թվին։ Գիտենք, որ Հեթում Պատմիչը նույն թվին «ի ֆռանկ գրոց» թարգմանել է «Պատմութիւն Խրոնիկոնի»-ն աշխատությունը։ Արդեն նշել ենք, որ Խրոնիկոնը որպես սկզբնաղբյուր օգտագործվել է Հեթում Բ-ի տարեգրության մեջ¹։ Այդ բանը ցույց տալու համար երկու քննադրերից բերենք մի քանի օրինակներ.

«Պատմութիւն Խրոնիկոնին»

№ 1898 ձեռագիր.

1. Էջ 152բ «ՌՄԶ (1190) կայսրն Ալամաց ֆրտրիկն խեղդեցաւ ի դետն Սելեկիոյ և թաղեցաւ յԱնտիոք։ ...և ի սոյն ամի ֆելիպ Բուէ աբ ֆրանց և Ընդլադ թագաւորն Ընկլիդտց եկին պաշարել զԱլա, և ի գալն Ընդլադ թագաւորն ընկլիդաց էառ զԿիպրոս կղզին ի յունաց ի Կեոսակ տուկէն։ Եւ յայսմ ամի եղև սկիզբն կարգաւորութեան Ալաման ֆրէրացն»։

2. Էջ 154ա «ՌՄԹ (1209) պատերազմեցաւ լաշբարին կայսրն յունաց ընդ սուլտանն յԻկոնիոյ ի Խոնաս. և յաղթեալ անաւրինացն սպանաւ սուլտանն և եկաց ի տեղի նորա սուլտան յԱղբտին Գալբաուսն»։

3. Էջ 154բ—155ա «ՌՄԺԶ (1216) վախճանեցաւ Խնաւասն թ պապն և յեա նորա եկաց պապ ի Հռոմ Ոնորիոս երրորդ, հռոմայեցի

«Համոստ պատմութիւնն ժամանակաց»

1. Էջ 77 «ՈՂԹ (1190) կայսրն Ալամաց ֆարկն խեղդեցաւ ի գետն Սելեկիոյ և թաղեցաւ ի յԱնտիոք։ Եւ ֆելիպ Բուէ աբ ֆրանցն և Ռեջարդ թագաւորն Ընկլիդաց անցին յայս կոյս ծովու և պաշարեցին ԸղԱբա, որ և ի դալն Ընկլիդաց էառ Ըղկղին Կիպրոսին յունաց ի Կեոսակ տուկէն։ Եւ սկիզբն եղև կարգաւորութեան Ալաման ֆրէրացն»։

2. Էջ 78 «ՈՄԸ (1209) պատերազմեցաւ լաշբարին ընդ սուլթանն յԻկոնիոյ ի Խոնաս և սպանաւ սուլթանն, և եկաց ի տեղի նորա Աղբտին Գալբաուսն»։

3. Էջ 79 «Ե ՈԿԵ (1216) մեռաւ Ըպրուրըն Ալամաց և եկաց հետ նորին Ֆտրիկն։ Եւ թագաւորն Հայոց Ղեոն էառ դաւ օվ

¹ Այդ մասին տես վերևում էջ 70։ Խրոնիկոնն ընդգրկում է 1294 տարվա պատմությունը, սկսվելով 1 թվից (մ. թ.) և վերջանում է 1294 թվականով։ Խրոնիկոնի տեղեկությունները գերազանցապես վերաբերում են եվրոպական պետություններին, հռոմեական պապերին, լատինական թագավորություններին և վերջիններիս հարեաններին համառոտ պատմությանը. բացի դրանից այնտեղ գտնում ենք նաև Կիլիկիայի հայկական թագավորությանը վերաբերող մի շարք տեղեկություններ, որոնք հանգեն են գալիս 1173 թվից (էջ 151բ) սկսած։ Ծնթաղում ենք, որ Կիլիկիայի հայկ. թագավորության վերաբերող տեղեկությունները թարգմանիչն է ավելացրել բնագրին։

ազգաւ, կացեալ ամս Ժ (=10) ամիսս է (=7) և աւուրս ԻԳ (=23): Եւ մեռաւ ընթրուրն Ալաթնաց Աւգուհն: Եւ տիբեաց յետ նորա ֆրտրիկն: Յայսմ ամի Թագաւորն Հայոց Լեոն էառ գաւով ի գիշերի գթադաքն Անտիոք ե կացոյց անգ ըրինձ զըմուրէն Թոռն Ըռաւ-ըինի աւագ եզրաւրն իւրոյ: Եւ ծնաւ Զապէլ զուստը Թագաւորին Լեոնի: Յայսմ ամի Քայ-քայուս սուլտանն յիկոնիոյ պաշարեաց զըբրդ Կապանն և կալաւ զիշխանսն Հայոց՝ զԿոստանդին Գունգուստապլն, որ կոչեցաւ աւագ պարոն և զԿոստանդին որդի տեաւըն Լամբ-րունին, և զԿոստակ տէրն Մազվայոյ ե դայլանս:

Ի գիշերի զԱնտիոք ե կացոյց անգ ըրինձ զըմուրէն. Թոռ եզրօրն իւրոյ: Եւ ծնաւ զուստը Լեոնի Թագաւորին Զապէլն:

Եւ Քաթողոզ սուլթանն պաշարեաց զըբրթ Կապանն ե կալաւ զիշխանն Հայոց Կոստանդին Գունգուստապլն, որ կոչեցաւ աւագ պարոն, ե զԿոստանդին Լանբրունին տիւրոյ որդին, և Կոստակ Մամուազոյ տէրն ե դայլանս:

Նման օրինակները կարելի է ավելի շարունակել: Խրոնիկոնի առանձին տեղեկությունները, սկսած 1097 թվից մինչև 1293 թիվը, գանում ենք աարեգրության մեջ: Սակայն այդ չի նշանակում, թե Խրոնիկոնի տեղեկությունները նույնությամբ անցել են տարեգրությանը: Ընդհակառակը, վերջինիս մեջ բերված տեղեկությունները շատ համառոտ են: Ավելին, Խրոնիկոնի մեջ միևնույն տարեթիվի տակ նշված ոչ բոլոր վկայություններն ենք գտնում տարեգրության մեջ, ինչպես այդ կարելի է նկատել վերևում համադրած երրորդ օրինակից: Սակայն տարեգրության մեջ կան բազմաթիվ վկայություններ, որոնք չկան Խրոնիկոնի մեջ. առանձին՝ Գագիկ Բ-ի սպանությունը, Ռուբեն իշխանին և հաջորդներին վերաբերող վկայությունները, Հեթում Բ-ի ժամանակակից մի շարք դեպքեր և ուրիշ տեղեկություններ:

Այսպիսով մեզ համար պարզվում է Հեթում Բ-ի տարեգրության հիմնական աղբյուրը՝ ինչ եթե սրան ավելացնենք նաև այն, որ տարեգրության մի շարք տեղեկություններն իրեն՝ հեղինակի ժամանակակից դեպքերն են, որոնց աղբյուրն ինքը, Հեթում Բ-ն կարող էր լինել, ապա կմնան տարեգրության ոչ շատ վկայությունները, որոնք, ինչպես հեղինակն է նշում, նա վերցրել է հայկական, հունական և ասորական աղբյուրներից: Հայկական աղբյուրներից Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության բնագրի առանձին վկայությունները բավական մոտ են Հեթում Բ-ի տարեգրության այն տեղեկություններին, որոնք չկան Հեթում Պատմիչի կողմից թարգմանված Խրոնիկոնի մեջ:

Ս. Անեցու ժամանակագրության հրատարակության բնագրում (էջ 135—136) գտնվում է Կիլիկիայի Ռուբինյան իշխանների հաջորդական վարդը: Այդ տեղեկությունների մասին հեղինակը գրում է. «... և այս ընդ ոմանց պաամա—

¹ Հեթում Պատմիչի թարգմանած Խրոնիկոնի բազմաթիվ վկայությունները գտնում ենք նաև Ս. Անեցու ժամանակագրության հրատարակության բնագրում, մինչդեռ Ս. Անեցու ժամանակագրության № 5619 ձեռագրում, որը 1176 թվի ընթրինակություն է, (զրիչն Ավետիս, վայրը համըջաձոր, էջ 108ա), Խրոնիկոնի և ոչ մի վկայությանը չենք հանդիպում: Նշանակում է Խրոնիկոնի մի շարք տեղեկությունները Ս. Անեցու ժամանակագրության բնագրում մուծվել են Հեթում Պատմիչի թարգմանությունից հետո: Առայժմ զժվարանում ենք հաստատ որոշել թե Ս. Անեցու ժամանակագրությանն անցած Խրոնիկոնի տեղեկությունները անմիջականորեն վերջինիցս է անցել, թե՛ Հեթում Բ-ի տարեգրության միջոցով:

գրաց: Իսկ մեք այսպէս ոչ եգաք զի ոչ յարմարէր ի շարս թագաւորացն Յու-
նաց... վասն այն և ես փոխեցի ըստ այլ պաւստագրաց...»:¹

Սույն վկայութիւնը, ինչպես և Ռուրիկիւնց իշխանների կարգը չենք
գտնում Սամ. Անեցու ժամանակագրութեան ամենահնագույն բնագրերում
(№№ 5619, 1898 ժողովածուներ), և եթե վերոհիշյալ վկայութեան «ամանց
պատմագրաց», «այլ պատմագրաց» արտահայտութիւնների մեջ հեղինակը
նկատի չի ունեցել նաեւ Հեթում Բ-ի տարեգրութիւնը, որի Ռուրիկիւնց իշխան-
ների հաջորդական կարգը բավական մոտ է Ս. Անեցու ժամանակագրութեան
հրատարակութեան բնագրի հիշյալ տեղեկութիւններին, նշանակում է վեր-
ջիններս մեզ անհայտ մի երրորդ բնագրից օգտագործել են, ինչպես Հեթում
Բ-ն, այնպես էլ Ս. Անեցու ժամանակագրութեան բնագրին ավելացում կատա-
րողը:²

Հայերին վերաբերող ստանձին վկայութիւններ հնարավոր է, որ Հեթում
Բ-ն վերցրած լինի Հեթում Պատմիչի թարգմանած Խրոնիկոնից: Իսկ հեղինա-
կի այն պնդումը, թե նա օգտվել է հունական և ասորական աղբյուրներից, մեր
որոշումները չհաստատեցին նրա հավաստիացումը:

Հեթում Բ-ի տարեգրութիւնը իր հերթին որպէս սկզբնաղբւր ծառայել է
այլ հեղինակներին: Նրա մի շարք վկայութիւնները հանդիպում ենք Ալիշանի
երկերում («Սիսուան», էջ 141, 194, 547 և այլն), վերջինս այդ վկայութիւնները
վերագրում է ոմն ժամանակագրի վամ XVIII դարի սկզբի հեղինակ Մատթէոս
Դպիր Ճեմեհիրճյանին: Սակայն, ինչպես այժմ պարզվում է, այդ վկայու-
թիւնների հեղինակը Հեթում Բ-ն է:

Հեթում Բ-ի տարեգրութեան այս նոր բնագրի արժանիքը կայանում է նրա-
նում, որ այն մեզ ներկայանում է, որպէս մատենագրական մի ամբողջական
գործ: Եթե նկատի չունենանք առանձին քառերի աղճատումները, որոնք գրչա-
գրական սխալի արդիւնք են, ապա առաջարկվող բնագիրը արտահայտում է
տարեգրութեան սկզբնական բնագիրը:

Երկրորդ՝ առաջարկվող բնագրում գտնվում են Հեթում Բ-ի ժամանակակից
դեպքերին վերաբերող բավական արժեքավոր և հետաքրքիր տեղեկութիւններ,
որոնք չենք գտնում նրա մեզ հասած մնացած բնագրերում:

Երրորդ, սույն բնագրի շնորհիվ պարզվեց իսկական հեղինակի հարցը:

Չորրորդ՝ առաջարկվող բնագիրը հետաքրքիր է նաեւ լեզվի տեսակետից:
Այն գրված չէ մաքուր հայերենով. բնագրում տեղ են գտել օտարազգի՝ լատի-
նական, արաբական, բաղամաթիվ բառեր, ասենք, պարոն, բասաճ, ըմպրոկ,
ֆրեր, բրինձ, խալիթ, դարիթ, սինոր, խսարել և այլն և այլն:

Հրատարակութեան համար հիմք ընդունել ենք Ա բնագիրը, որը չծանրա-
բեռնելու նպատակով, մնացած Ե, Բ, Գ, Ը և Ավգերյանի հրատարակութեան
(Դ) բնագրի տարբերութեան աչքի ընկնող շեղումները տվել ենք տո-
ղատակ՝ բացառելով մանրամասնութիւնները (օր. Կոստանդին թե Կոստան-
տին, բերթն, թե բերդն և այլն):

¹ «Սամուէլի քահանայի Անեցույ հաւաքմունք ի գրոց պատմագրաց» էջ, 130:

² Հեթում Բ-ն իր տարեգրութիւնը կազմելիս, կարծում էինք, օգտագործած կլինէր
Սմբատ Գունգստապի «Ճարեգիրքը» (վերջինիս միջոցով էլ Մ. Ուռճայեցու ժամանակա-
գրութիւնը), սակայն երկու բնագրերի համեմատութիւնը ցույց տվեց, որ միևնույն
գեպքերը ոչ միայն տարբեր ձևով ու ծավալով են պատմված, այլև գրված են տարբեր
տարեթվերի տակ. օրինակ՝ համաձայն Հեթումի, Կոստանդին մահացել է 1102 թվին,
իսկ Սմբատի՝ 1100-ին:

III.

ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԺԱՄԱՆԱԿԱՅ ՀԱՒԱՔԵԱԼ Ի ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏ-
ՄՈՒԹԵԱՆՅ, ԱՅՍԻՆՔՆ՝ Ի ՀԱՅՈՑ, Ի ՖՌԱՆԿԱՅ, Ի ՅՈՒՆԱՅ, Ի ՅԱ-
ՍՈՐՈՑ ԳՐԵԱՆՅ. ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԻ ԻՄՈՑ, ԾԱՌԱՅԻՍ ՔՐԻՍՏՈՍԵՒ ԱՍՏՈՒ-
ԾՈՑ ՀԵԹՄՈՑ ՏԵԱՌՆ ԿՈՒՌԻԿՅՈՍՈՑ, Ի ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԶԻԵ (1296)

- 5 Ի թուականին Հայոց ՇԻԵ (1076) Դադիկ թագաւորն Հայոց
ըսպանաւ որդոյն Մանդէլի,¹ Ի բերթն Կենդոսկէի.
- ՇԼ (1081) Եւս որոյ Ռուբէն ազգական նորա երթեալ
բնակեցաւ. Ի սահմանս Կոստառոյ. և անտի հասկալ Ի գեօղըն
Կօրմօղոյօն և անդ վախճանեցաւ.
- 10 ՇԽ (1001) և որդի նորա Կոստանդին էառ զՎահկայն. Եւ
նախ սա տիրեաց Ի Կիլիկեայ, Ի վերայ աղգին Հայոց.
- ՇԻԹ (1080) Սուլթանն էառ զԱնաիոք, սպանօ Սուլի-
մանն.²
- ՇԽԵ (1096) շարժեալ առաւելած զմեծ բասաճն. Ֆոանկաց
15 զալ Ի թափումն յԵրուսաղէմի Ի ձեռն ֆոանկի միայնակեցի
միայ, ուրսւմ անուն էր Փետէրմիա.³
- ՇԽԶ (1097) բասաճն էառ զԵիկիկեա քաղաքն Յունաց.⁴
- ՇԽԷ (1098) եղև թափումն Անաիոքայ և Ուռնայոյ յա-
նօրինաց.⁵
- 20 ՇԽԸ (1099) եղև թափումն Երուսաղէմի և առկն Դօնտօֆրէ
տիրեաց յԵրուսաղէմի.⁶
- ՇԽԹ (1100) մեռաւ. Դօնտօֆրէ և եկաց ՝ առաջին թա- 246բ

1—4 ԵՅԳԸ Ժամանակադրութիւնք (Դ Ժամանակադրութեանց) Ե (Ե ՅԱ. Դ ԳՃ. Ը
երեք հարիւր) և մէկ ամաց կարճ Ի կարճոյ հաւաքեալ Ի զանազան պատմութեանց՝ հայ,
ֆոանկ և ասորի, շարադրեալ պարոն Հէթմոյ (Դ Հէթմոյ) տեառն Կոռիկոսոյ (Ե Կոռիկոսի,
Դ Կոռիկոսաց) և արար (Ե արարեալ) զայս բանք Ի թվին (ԵԸ թուին) Հայոց էճԽԵ (Դ
ԵճԻԷ, Ը ՇԽԵ) և յամի (Դ յամի տեառն) մարդեղութեան ՌՄՂԶ (Դ ՌԲՃՂԶ): 1—4 Ե Հա-
մառօտ պատմութիւն Ժամանակաց հօաքեալ Ի զանազան պատմութեանց տյսինքն) Ի հայ,
Ի ֆոանկ և Ի յուն և Ի յասորի զբնաց Ի թուականիս Հայոց ԶԽԵ: 5 ԵՅԴ ՇԻԵ (Դ ԵճԻԵ)
և Քրիստոսի ՌՂԶ փի. ՇԻԵ: 6 ԵՅԳԸ բերդն Կենդոսկէի (Ե Կենդոսկէի, Դ Կենդոսկի,
Ը Կենդոսկոյի) Ի Լիկանդոն: 7 ԵՅԳԸ ՇԼ չիք: 9 ԵՅԳԸ և չիք: 10 ԵՅԴ ՇԽ չիք,
Ը ՇԽԶ փի. ՇԽ, Ե և [որդի] չիք: 11 ԵՅԳԸ նախ չիք, ԵՅԳԸ Ի Կիլիկեայ չիք: 12 Ե ՇԽԹ
Սոլէմոն: 12—13-րդ տողը ԵՅԳԸ չիք: 14 ԵՅԴ ՇԽԶ Հայոց և Քրիստոսի ՌՂԷ (Դ ԵճԽԶ յամի
տեառն ՌՂԷ) եղև (Ե [եղ]և) առաջին (Դ յառաջին) փի. շարժեաց աստուած զմեծ, Ը ՇԽԵ
չիք: 15 ԵՅԳԸ և աղատել յանօրինաց փի. Ի թափումն յԵրուսաղէմի: 17 ԵՅԳԸ Ի նոյն
(Դ Ի սոյն) ամին փի. ՇԽԶ, ԵՅԳԸ Ի յունաց: 18 ԵՅԳԸ աղատեցան փի. եղև թափումն:
20 ԵՅԳԸ աղատեցաւ փի. եղև թափումն:

գաւոր Երուսաղէմի Պաղատինն, եղբայրն Գօաօթրէի, կոմսն Ուռնայոյ:

ՇԾ (1101) առաւ Սղայրն՝ յանօրինաց:

ՇԾԱ (1102) պարոնն Հայոց Կոստանդին վախճանեցաւ,⁹

և էառ զիշխանութիւն նորա, անդրանիկ որդին իւր՝ Թորոս:

ՇԾԳ (1104) առաւ Աքա յանօրինաց:

ՇԾԸ (1109) առաւ Տրապոլիս յանօրինաց,¹⁰

ՇԾԹ (1110) առաւ Պէրուա և Սայաայ ի յանօրինաց,¹¹

ՇԿԴ (1115) շինեցին քրիստոնեայքն զՔարաք¹² և զՇա-

10 պաք,¹³

ՇԿԵ (1116) մեռաւ Թագաւորն Երուսաղէմի Պաղատինն և երկրորդ Թագաւորեաց Պաղատինն Տպուրքն, ազգականն նոցա:

ՇՀԸ (1129) վախճանեցաւ պարոն Թորոսն Հայոց և էառ զիշխանութիւն Լեոն, եղբայր նորա:

15 ՇՁ (1131) Թագաւորն Երուսաղէմի Պաղատինն վաղճանեցաւ, և երրորդ¹⁴ Թագաւորեաց իւր փեսայն Ֆուքն:

ՇՁԶ (1137) Թագաւորն Յունաց Պորֆիրոսն էառ զԿիլիկիեայ ի պարոն Լեոնէն,¹⁵ ԸզԼեոն հանդերձ որդւովքն կապեցին և առաքեցին ի Կոստանդնուպոլիս. և մեռաւ Լեոն:

20 ՇՂԲ (1143) Թագաւորն Երուսաղէմի Ֆուքն վաղճանեցաւ և չորրորդ Թագաւորեաց որդի նորա Պաղատինն:

ՇՂԳ (1144) Թորոս որդին Լեոնի եկն ի Կոստանդնուպոլիսէ և էառ զՎահկան և նորոգեաց զիշխանութիւնն Հայոց:

25 ՇՂԵ (1146) և եղև երկրորդ¹⁶ բասաճն. և նորոգեաց բասաճն Ֆոանդաց, յոր եկն Քուռաթն, բրուրն Ալաֆնաց և Լաւիդ ուն տն Ֆրանցն:¹⁷

ՇՂԶ (1147) ընպրուռն և ուն տն Ֆրանցն պաշարեցին զԴամասկոս և ոչ կարացին առնուլ,¹⁸

ՈԶ (1157) առաւ զԱսղալէն յանօրինաց,¹⁹ Պարոն Հայոց

30 Թորոսն վախճանեցաւ կրօնաւորեալ²⁰ և կալաւ զիշխանութիւն նորին եղբօրն Մլեհն:

ՈԺԲ (1163) Թագաւորն Երուսաղէմի Պաղատինն վախճանեցաւ:

3 BB Խօսսայրն (D Խոսսայրն, E Շէղայրն) փխ. Սղայրն: 3-րդ տողը Γ չիք: 4 BBΓD մեռաւ փխ. վախճանեցաւ: 5 BBΓD տիրեաց փոխան փխ. էառ զիշխանութիւն, BB անդրանիկ չիք, E նորայ փխ. իւր: 7 BBD ՇԾԹ (Γ ԾՃԾԹ) փխ. ՇԾԸ: 8 BBΓD ի նոյն ամին փխ. ՇԾԹ, BBΓD ի չիք: 10 E Թագաւոր եկած փխ. Թագաւորեաց, Γ Տէպուրք, BBΓD նորին փխ. նոցա: 13 BBΓD մեռաւ փխ. վախճանեցաւ: 14 BB Լեոն չիք: 15 BBΓD մեռաւ փխ. վաղճանեցաւ: 16 BBΓD նորին փխ. իւր: 18 BBDE Լեոնէ, BBΓD և զԼեոն Բ. որդոքն (B որդօքն) առաքեաց փխ. ըզԼեոն հանդերձ որդւովքն կապեցին և առաքեցին, E առաքեաց կապանօք փխ. կապեցին և առաքեցին: 19 BBΓDE որ և անդ մեռաւ (E մեռօ) փխ. և մեռաւ Լեոն: 20 BBΓD մեռաւ (E մեռօ) փխ. վաղճանեցաւ: 24 BBΓDE և [եղև] չիք, BBΓDE և նորոգեաց բասաճն (D բասաճն չիք) չիք: 25 BBΓ զոր (D յոր չիք, E յորս) փխ. յոր, BBΓD փրիօրն փխ. բրուրն: 26 BBΓD Լոյզն ուն տն (E Լօիդ ուն տն): 30 B կալ (B կալեալ, E կալօ) փխ. կալաւ: 31 BBΓDE նորա (E նորայ) Մլեհ (DE Մլեհ) եղբայր (E եղբայրն) իւր փխ. նորին եղբօրն Մլեհն: 32—33 BBΓD մեռաւ (E մեռօ) փխ. վախճանեցաւ:

ՈԺԳ (1164) Միւհ եղբայրն Թորոսի սպանաւ ի Սիւ. և իշխանքն նորա, զՌուբէն որդին Ստեֆաննէի || եղին պարոն Հա- 247ա
յոց,²¹ և հինկերբորդ (SIC) Թազաւորեաց Ներուսաղեմի Ամառի.
և ՈԺԶ (1167) էառ զՍքանդարիա²² և գՊլպէս:

5 ՈԺԷ (1168) Ամառի Թազաւորն Ներուսաղեմի խանկարեաց
զՍաւահատինն և Հոռոմնոյն օգնականութեամբն պաշարեաց զՏա-
տիաթն և ոչ կարաց առնուլ:²³

ՈԺԸ (1169) Պիւնաս խլիւցաւ ի քրիստոնէիցն:

10 ՈԺԹ (1170) եղև շարժ սաստիկ և բազում քաղաք և
բերթք փլեցան, նաև ի Սէհլն:

ՈԻԲ (1173) տէր Ներսէս Շնորհալին վախճանեցաւ ի Քրի-
ստոս յօգոստոսի ԺԳ (13), օրն հինգշաբթի. ոհ:²⁴

15 ՈԻԳ (1174) Թազաւորն Ամառին Նրուսաղէմի վախճանե-
ցաւ. և վեցերբորդ Թազաւորեաց որդի նորա Պաղտին, որ ան-
կաւ. յախաս զսթուրեան:

ՈԻԹ (1180) կայսրն Յունաց Մանուէլն յախտեցաւ ի Ղլիճ
Ասլանէն մերձ ի Կօնն:²⁵

ՈԻԹ (1180) Թազաւորն Յունաց կայսր Մանուէլն վախ-
ճանեցաւ:

20 ՈԼ (1181) Եօթնբերորդ Թազաւորեցուցին զփոքր Պաղ-
տինն՝ որդին մարգիղին, յառաջ քան զվախճանիլ Պաղտին Գո-
թոյն:

ՈԼԴ (1185) վախճանեցաւ Թազաւորն Նրուսաղէմի²⁶ Բաղ-
աին Գոթին:

25 ՈԼԵ (1186) պարոն Հայոց Ռուբէնն վախճանեցաւ և եկաց
ընդ նմայ Լեոն եղբայրն ի[ւր].²⁷ Թազաւորն Նրուսաղեմի Բաղ-
աին փոքրն [մեռաւ] և եկաց ընդ մայրն նորա Սիւպ Թազուհին
և իւրհայրդիրն Կիւ տ[ը] Լազօնեայն:

2 БВГДЕ բերեալ զՌուբէն (DE զՌուբէն) զորդին: 3—4 БВГД ի սոյն ամի Թազա-
ւորեաց Նրուսաղեմի Ներորդ Ամառինն: ՈԺԶ Ամառի Թազաւորն Նրուսաղեմայ էառ զՍան-
կարիայ և գՊլպէս փի. և հինկերբորդ Թազաւորեաց... էառ զՍքանդարիա և գՊլպէս: 5
ВГ Խանդերեց (D Խանկերեց, E Խանկերեաց): 6 А հասուռնոյն (БВГ յունաց) փի. Հոռոմ-
նոյն: 7 8—10 E և փլան քաղքնի և բերդեր ի բազում տեղիս և ի Սէհլն փի. և բազում
քաղաք... նաև ի Սէհլն: 10 БВГД և ի Սէհլն առաւել փի. նաև ի Սէհլն: 11—12 БВГД
Յիւլյեցին կաթողիկոսն Հայոց (БВ հայոց չիք) փոխեցաւ առ Քրիստոս յօգոստոսի (Г
օգոստ[ո]սի) ԺԳ օր (ГД օրն) Նշաբթի, E Կաթողիկոս Հայոց փոխեցո առ Քրիստոս յօ-
գոստոս ԺԶ. Եշաբթի օր: 13 БВГД մեռաւ (E մեռաւ) փի. վախճանեցաւ: 14 БВГД որ և:
15 БВГД յախաս չիք, E յախա, БВ գոգութիւն, ГД ի գոգութիւն: 16 БВДЕ ՈԻԵ (Г ԶԺԻԵ)
փի. ՈԻԹ, БВГДЕ Ղլիճ (DE Նըլիճ) Ասլան սուլտանէն: 18 БВДЕ կայսրն փի. Թազաւորն
18—19-րդ տողը Г չիք, БВДЕ կայսր չիք, БВД մեռաւ (E մեռ[ւ]) փի. վախճանեցաւ: 20
БВД Թազաւորեաց փի. Թազաւորեցուցին: 20—22Г ԶԺԻԹ կայսրն որդին մարգէղին յա-
ռաջ քան զվաղճանն Պաղտին Գոթոյն առաւ ի ճնէքօտիայ և Ամասիայ փի. ՈԼ Եօթնբերորդ
Թազաւորեցուցին... Պաղտին Գոթոյն: 21 БВ զվախճանն (D զվախճան, E զմեռնելն) փի.
զվախճանիլ: 22—23-րդ տողերի միջև D Սա շինեաց քաղաք ի վերայ Յորդանանու ի
հունն Յակորայ: Առաւ ի ճնէքօտիայ և Ամասիայ: 23 БВД ՈԼԳ (Г ԶԺԼԳ) փի. ՈԼԳ, БВГД
մեռաւ (E մեռաւ) փի. վախճանեցաւ, БВГД Թազաւորն Նրուսաղէմի չիք: 25 БВГД
մեռաւ (E մեռաւ) փի. վախճանեցաւ, БВГД էառ զիշխանութիւնն փի. եկաց ընդ նմայ: 26
E և նստօ եղբայր իւր Լեոնն փի. և եկաց ընդ նմայ Լեոն եղբայրն ի[ւր]: 26—28 БВГДЕ
ի սոյն ամի (E ի սոյն ամի չիք) Պաղտին փոքրն (E Պաղտինն Նրուսաղէմի) մեռաւ և եկաց
ուրթերորդ (БВЕ Ը. երրորդ) Թազաւոր մայր նորա (E նորայ) Սիւպիայ Թազուհին (D Սի-
ւպիայ) և հայրդիրն իւր Պաղտին Կիւ տ[ը] Լազինեան փի. [մեռաւ] Թազաւորն Նրուսաղեմի
... Կիւ տ[ը] Լազօնեայն:

- ՈԼԶ (1187) կոտորուած քրիստոնէից ի Սալահաղրէն մերձ
յերուսաղեմի,³³ յորում աւուր կալան և զթագաւորն Դի. և
անյայտ եղև սուրբ խաչն Գրիստոսի. Ետուն և զԱքա ի Սալա-
հաաինն և աղա զԱղալէն, որ և ի սոյն ամի էառ զՍալահաաինն
5 զԵրուսաղէմ և զամենայն Սէհլն, բաց ի Սրոյ և ի Տրապոլսոյ,³⁴
ՈԼԹ (1190) կայսրն Ալաթնաց Ֆարկն խեղդեցաւ ի գետն
Սելեկիոյ և թաղեցաւ ի յԱնտիոք: Եւ Ֆիլիպ ոէ ար Ֆրանցն³⁵ և
Ռիցարդ թագաւորն Ընկլիզաց³¹ անցին յայս կոյս ծովու և պա-
շարեցին ըզԱքա, որ և ի գալն Ընկլիզաց էառ ըզկղզին Կիպրո-
10 սին Յունաց ի Կիոսակ տուկէն:
Եւ սկ[ի]զրն եղև կարգաւորութեան Ալաման ֆրէրացըն,³²
ՈԽ (1191) ոէ տ[ը] Ֆրանցն և Ընկլիզաց թագաւորն առին 247ր
զԱքա ի յանօրինաց,³³
ՈԽ (1191) Կի թագաւորն յԵրուսաղեմի գնեաց զԿիպրոս
15 կղզին ի թագաւորէն Ընկլիզաց:³⁴
ՈԽԱ (1192) թագաւորն Ընկլիզաց արար սէր ընդ Սալա-
հատինն և դարձուցին սիրով ի ձեռն քրիստոնէից զՃօֆրն,
զԱրսուֆն, զՍղայրն և Կաֆաս:³⁵
ՈԽԳ (1194) թագաւորն Կիպրոսի Կի վախճանեցաւ, և
20 երկրորդ թագաւորեաց Կիպրոսի Հեմրի, եղբայրն իւր:
Պարոնն Հայոց Լեոն կալաւ զՊեմունդ բրինձն³⁶ Անտիոքայ
և եդ ի բանդի ի կլայն Սլսոյ:
ՈԽԴ (1195) աղատեցաւ Տէմունդն ի բանդէն միջնորդու-
թեամբ Հէոի գունդին և եզև խնամութիւն ընդ պարոն Լեոնին
25 և բրինձին:
ՈԽԵ (1196) մեռաւ Սալահատինն և աիւրեաց Մսրայ և Դա-
մասկոսի Յէտլ եղբայր նորա:³⁷
ՈԽԶ (1197) պարոն Լեոնն պսակեցաւ թաղիւ և եկաց
առաջին թագաւոր ի Կիլիկեա:
30 Եւ զՃպէթն թաւով (sic) առին յանօրինաց:
Մելիք Յեալն էառ ի քրիստոնէից զՃօֆն:

1 ԵՅԳԴ եղև կոտորուած (Ե եղև կատարուած) փխ. կոտորուած: 2 ԵՅԳԴԵ և կալան
փխ. յորում աւուր կալան, ԵՅԵ ե (զթագաւորն) չիք: 3 ԵՅԳԴԵ յորում աւուր (Ե օուր)
աւին (ԴԴ տվին) փխ. ետուն և: 4 ԵՅԳ զԱսկալունն (Դ զԱսկալունն): 5 ԵՅԳԴ Տրապոլսոյ Սուր
Տիւրոսէ, յամի տեառն Յիսուսի ՌժՁԲ փխ. ի Սրոյ և ի Տրապոլսոյ: 7 ԵՅԳԴ ոէ տէ փխ.
ոէ ար: 6—7-րդ տողը (ՈԼԹ կայսրն... թաղեցաւ ի յԱնտիոք) Ե չիք: 8 ԵՅԳԴ Ռէջալ:
7—20-րդ տողը (Եւ Ֆիլիպ... եղբայրն իւր) Ե չիք: 10 ԴԴ ի յունացն (ԵՅ ի յունաց),
ԵՅԳԴ Կիւրսակ: 11 ԵՅԳԴ յայսմ սկիզբն փխ. և սկ[ի]զրն, Դ կարգաւորութեան չիք: 14
ԵՅԳԴ ՈԽ չիք: 17 ԵՅԳԴ սիրով ի ձեռն չիք, ԵՅԴ ի քրիստոնէքն (Դ ի քրիստոնեայքն)
փխ. քրիստոնէից: 17—18 ԵՅԳԴ զՃաֆն, զԱրսուֆ (ԴԴ Սուֆ) զԽուսայրն զԿաֆաս փխ.
զՃօֆրն, զԱրսուֆն, զՍղայրն և Կաֆաս: 19 ԵՅԳԴ մեռաւ փխ. վախճանեցաւ, և չիք: 21 ԵՅ
Թորոս պարոնն Հայոց (Դ Թորոս Լեոն պարոն Հայոց), Ե պարոնն չիք: 22 Ա ետ փխ. եդ:
24 Ա Հէոի փխ. Հեոի, ԵՅ Գունդէն: 23—24 Ե միջնորդութեամբ Հէոի Գունդին չիք: 24
Ե և (եղև) չիք, ԵՅԴ խաղաղութիւն (Ե խնամեցո) փխ. խնամութիւն: 24—25 ԵՅԳԴ Լեոն
և ընդ բրինձն: 25 Ե և բրինձին չիք: 27 ԵՅԳ սուլտանն Յէտ փխ. Յէտլ, Դ սուլտան փխ.
Յէտլ: 28—27-րդ տողը Ե չիք: 28 ԵՅԳԴ Պարոնն (Դ պարոնն չիք) Հայոց Լեոն, Ե Հայոց
Լեոն պսակեցո, Դ թաղիւ յաւուրս յայտնութեան: 29 Ե ի չիք, Կիլիկոյ: 30—31-րդ տողերը Ե
չիք: 30 ԵՅԳԴ և չիք, զՃպէթ (Դ Ճպէթ) դաւով (Ե դաւով): 31 ԵՅԳԴ զՃաֆն փխ. զՃօֆն:

Ուեհ (1198) Պէրոթ առաւ յանօրինաց։³⁸

ՈՄ (1201) մեռաւ Պէմունդն, իւր որդին, որ [էր] կոմսն Տրապոլսոյ։

5 ՈՄԱ (1202) եղև երկրորդ շարժ և կործանեցաւ բազում քաղաք և ապարանք ի Սէհլն։

ՈՄԲ (1203) Լեոն թագաւորն Հայոց էառ զԱնտիոք։

10 ՈՄԳ (1204) Գունթըրմ ֆրանկոսն և տուկն Վանաաի-կացոց առին զԿոստանդնուպօլիս ի Յունաց։ Եւ եղև կայսր ի Կոստանդնուպօլիս Պադարինն։³⁹ Եւ զօրքն Երուսաղէմի և Կիպ-րոսի գնացին յԵղիպտոս և աւերեցին բազում անգլիս ծովե-
20 ղերացս։ Եւ Փիլիպոսն աէ Ֆրանցն էառ զՆորմանգոյ⁴⁰ աշխարհն ի թագաւորէն Ընկլիզաց։

ՈՄԴ (1205) մեռաւ թագաւորն Կիպրոսի Հեմրին։

15 ՈՄԵ (1206) մեռաւ բրինձն Անտիոքա Պէմունդն և եկաց որդին Պէմունդն կոյրն։

ՈՄԶ (1207) թագաւորն Հայոց Լեոն կայաւ զՍևաստիոսն Հեռի որ զովքն և զԿոստանց Խումարաիաշն, և Ճօլինն և զՊաղ-
248a տինն։⁴¹ Եւ զաէր Յովհաննէս կաթողիկոսն ընկեցին⁴² յաթոռոյն և եղին զտէր Դաւիթն Արքակաղեցին։

20 ՈՄԷ (1208) Պէմունդ բրինձ Անտիոքա[յ] իւանկարեաց իւր ձիււորքն և զԱնտիոքա[յ] Գումինն, որ մարտեալք էին ընդ-դէմ նորա, կայաւ և զպսարիարքն և եղ ի բանտի, որ և անդ վախճանեցաւ։ Եւ Խոսրոֆ շահ սուլթանն յիկոնիոյ,⁴³ որդի Ղլիճ Ասլանին էառ զԲերդ[է]օսն ի Հայոց և կայաւ ըզտէր նորա Գրի-
25 դորն, որդին Լեոնի։⁴⁴

ՈՄԸ (1209) պատերազմեցաւ լաշքեարին ընդ սուլթանն յիկոնիոյ ի Խոնաս։⁴⁵ և սպանաւ սուլթանն, և եկաց ի տեղի նորա Ազըտին Դաղազուզն։⁴⁶

30 ՈՄԹ (1210) պսակեցաւ ոէ Ճուանն ընդ թաքունին Մա-ըիայ, որ եղև տասներորդ թագաւոր Երուսաղէմի։ Եւ Լեոն թա-գաւորն Հայոց էանց ի Կիպրոս և էառ իւր կին զքոյր թագա-ւորին զՍպիլն, որ է Ելիսարէթ։⁴⁷

ՈԿ (1211) վախճանեցաւ տէր Դաւիթն և դարձեալ եղև կա-թողիկոս Հայոց տէր Յովանէոն։

32. Խոսքը վերաբերում է Տևտոնյան կամ Գերմանական օրդենի հիմնադրմանը, որը կազմակերպեցին Ակկայի պաշարման ժամանակ Բրեմենի և Լյուբեկի վաճառականները, Շվաբիայի հերցոգ Ֆրիդրիխի հովանավորության ներքո, և որը հետագայում ստացավ ռազմական բնույթ:

33. Հեղինակը նկատի ունի Ֆիլիպպ II Ավգուստին և Ռիչարդ I Առյուծասիրտին, որոնք Ակկան գրավել են, ըստ Հեթում Բ-ի մեկ տարի պաշարելուց հետո, իրականում պաշարումը տևել է 2 տարի (տես՝ акад. Успенский «История Виз. империи» т. III, стр. 335: Мюллер «История ислама» т. III, стр. 172) և այն գրավել են 1191 թ. հուլիսի 12-ին, Успенский. նույն անդ, էջ 343, Мюллер, նույն անդ, էջ 173):

34. Ռուս հռչակավոր բյուզանդագետ ակագ. Ուպենսկին Կիպրոսի գրավումը նշում է

1191 թ. ներքո, Ռիչարդ Առյուծաթարի կողմից, որը կղզին գրչում է նրուաղեմի թագավոր Դվիդոն Լուդիկյանին: Հեթում Բ-ն այստեղ երկու քնդում է տալիս, նախ՝ Ռիչարդ Առյուծաթար-
տո ի հարկոսը գրավել է 1190 թ., երկրորդ՝ Դվիդոն Լուդիկյանը Ռիչարդից կղզին գնում է: Կիպ-
րոսի գրավման մանրամասնությունները տես ահադ. Ուսպենսկու մոտ («История Виз. им-
перии» т. III, ст. 334—335):

35. Քաղաքներ Միջերկրական ծովի արևելյան տփին: Դյուլորիեն Ճոֆր (Ճաֆ) քաղաքը
նույնացնում է Յաֆֆայի հետ: Բնագրի «Կաֆաս» քաղաքը կարծում ենք Հալֆան է, Ակկայի
և Կեսարիայի միջև: Բնագրում «գլիզայրն» փոխանակ «գվզայրն»:

36. Բնագրում «գՏեմունդ» ձևով:

37. Ինչպես հայտնի է Սալահդինը մահացել է 1193 թ. մարտի 4-ին: Սամ. Անեցին սույն
ղկարը նշում է 1194 թ. ներքո (էջ 143), իսկ Միխ. Ասորին՝ 1182 թ. ներքո (էջ 500): Բնա-
դրում հիշված «Յետլա»-ը Սալահդինի եղբայր, Ադիլ-Սելֆ-ադ-դին Աբու-Բեկրն է, որն իշխել է
1200—1218 թ. թ.:

38. Բնագրում «յունօրինաց» ձևով: Համաձայն Իբն-Ալաթիրի Բելրուֆի գրավումը տեղի է
ունեցել 1197 թ. սեպտեմբերին:

39. Այս մասին տես վերևում, էջ 53, ժանոթ. 15:

40. Բնագրում «գնոր մարդոյ» ձևով, այն ուղղեցինք ըստ տարեգրության Ավգերյանի հրա-
տարակության: Խոսքը վերաբերում է Ֆիլիպպ II Ավգուստի և անգլիական թագավոր Հովհան
Անհոդի, Անգլիայի՝ Ֆրանսիական տիրապետությունների համար մղվող կռիվներին: Ֆիլիպպ
II-ը նորմանդիան գրավեց 1202—1204 թ. թ. շրջանում:

41. Սույն անուններին հանդիպում ենք Լեոն Ա թագավորի թագադրության հանդեսներին
ներկա գտնվող իշխանների ցուցակում, որը մեջ է բերում Սմբատը՝ Հեռի (Իմա. Հենրի)
Սևաստուր վերոհիշյալ իշխանների հայրն էր և Նոր-բերդի տերը: Կոստանց Խումարտիաշը (Կա-
մարախաս) Սելեկիայի տերն էր: Ծովինը Սինիտի տերը: Իսկ Պաղտինի մասին Հեթումը որո-
շակի չի գրում, սակայն կարծում ենք, որ նա նկատի ունեցել է Անդուշի և Կուպայի տիրոջը
Ջարմանալին այն է, որ Հեթում Բ-ն վերոհիշյալ իշխանների բանտարկության պատճառների
մասին ոչինչ չի հաղորդում: Օրմանյանը նկատի ունենալով, որ Հեթում Բ-ն վերոհիշյալ իշ-
խանների բանտարկությունը և Հովհաննես Զ. Սսեցի կաթողիկոսի գահընկեցությունն իրար
կապակցելով է տալիս մի կողմից և Հեռի Սևաստիոսը, Հով. Սսեցու ըրոջ ամուսինն էր մյուս
կողմից, ենթադրում է, որ այդ բանտարկությունը տեղի է ունեցել քաղաքական անհավատար-
մություն հետևանքով, մանավանդ, որ այդ շրջանում Լեոն Ա թագավորի և Հով. Սսեցի կա-
թողիկոսի հարաբերությունները լարված էին («Ազգապատում», էջ 1568, Հմմտ. Ալիշան «Սի-
սուտն», էջ 506): Դյուլորիեն Խումարտիաշին սխալմամբ համարում է «թուրքմեն շեֆ» (նույն
տեղ, էջ 481, note 1):

42. Բնագրում «ընկեճին» ձևով: Հովհաննես Զ. Սսեցու դահլենկեցության և Դավիթ Արքաղ-
նեցու կաթողիկոս դառնալու հարցը բավական մանրամասն բնում է Օրմանյանը («Ազգապա-
տում», էջ 1568—1570), որի համոզմամբ Դավիթ Արքաղնեցին ոչ թե կաթողիկոս է եղել, այլ
աթոռակից (նույն տեղ, էջ 1569):

43. Ղիաս-ադ-դին-Քեյ Խոսրով I սուլթանը Իզդ-ադ-դին Ղիճ-Արսլան II-ի որդին էր, որը
իշխել է 1202 թ. մինչև 1210 կամ 1212 թ. թ. համաձայն Դյուլորիեի և կամ 1192 թ. մինչև
1200 թ. և 1204 թ. մինչև 1210 թ. (երկրորդ անգամ) ըստ Ս. Լեն-Պուլի:

44. Բերդուս բերդը գտնվում է Խուրմա գետի ձախ տփին, նախքան Կեոք-սու գետին խառ-
նելվելը, Ընկուղեկ լեռից հարավ և Մարաշից հյուսիս: Բերդուսը ժամանակին պատկանել է Գող
Վասիլ իշխանին: Բերդուսի իշխան Լեոնը և նրա որդի Դրիգորը նույնպես հիշված են Սմբատ
Դունգստարի ցուցակում («Տարեգիրք», էջ 111):

45. Երբ 1204 թ. ապրիլի 12-ին խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը (տես էջ 53,
ժանոթ. 15), մի շարք իշխանական տներ ձգտեցին կազմակերպել անկախ իշխանություններ:
Հունական իշխաններից մեկը՝ Թեոդոր Լասկարիսը, որը մոտ էր կանգնած կայսերական արքու-
նիքին (ամուսնացած էր Ալեքսեյ III կայսեր ըրոջ հետ), Կոստանդնուպոլսի 1204 թ. գրա-
վումից հետո, փախավ արևելք և Նիկիայում հիմք դրեց Նիկեայական կայսրությանը (այս մա-
սին մանրամասնությունները տես Աкад. Успенский «История Виз. империи» т. III, отд. VII)
իշխելով 1204 թ. մինչև 1222 թ.: Բնագրի այն վկայությունը, թե պատերազմեցաւ լաշքբարին
ընդ սուլթան յիկոնիոյ ի Խոնասս վերաբերում է Թեոդոր Լասկարիսի և Իկոնիայի սուլթան
Ղիաս-ադ-դին Քեյ Խոսրով I-ի պատերազմին, որը տեղի ունեցավ 1209 թ.: Համաձայն Հեթում

Բ-ի ճակատամարտը տեղի է ունեցել խոնարհում, վերջինս Փորթ Ասիական քաղաք է, գտնվում է Փոռոգիայում, Գալլ գետից ոչ հեռու, հնում կոչվել է Կոլոսսա:

46. Կարծում ենք խոսքը վերաբերում է Ղիաս-ագ-դին Քեյ-խոսրով I-ին, որին հաջորդել է Իզզ-ագ-դին Քեյ-Քավուզ I-ը 1210—1219 թ. թ.:

47. Մյբատի մոտ Մալիա-ի փոխարեն Զապլա սա ոչ թե Կիպրոսի թագավոր Ամորիի քույրն էր, ինչպես հաղորդում են մեր աղբյուրները, այլ դուստրի Զարելը, կամ ինչպես ասում են նաև Իզաբելա, Լևոն Ա-ի երկրորդ կինն էր:

48. Խոսքը վերաբերում է իսպանական Ռեկոնկիստայի շրջանում 1212 թ. կառավարող Են Եոլոսա քաղաքի մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին, որտեղ իսպանական արաբները գլխավոր ջախջախվեցին Կաստիլիայի, Արագոնիայի, Նավարայի և Պորտուգալիայի միացյալ ուժերի կողմից:

49. Խոսքը վերաբերում է ֆրանսիական թագավոր Ֆիլիպ Ավգուստ II-ի և անգլիական թագավոր Հովհան Անհոդի կողմնակիցներին, որոնք մղվում էին Անգլիայի ֆրանսիական տիրակալությանը համար 1214 թ. հուլիսի 2-ին Ֆիլիպ Ավգուստի որդին, Լուգովիկոսը (պապա Հուգովիկոս VIII) կարող-Մուանի մոտ ջարդեց Հով. Անհոդի զորքերին, իսկ հուլիսի 27-ին, Բուլիինի մոտ, անգլի ունեցած վճռական ճակատամարտում, ինքը՝ Ֆիլիպ II-ը գլխավոր ջախջախեց Անհոդի և Օտտոն IV-ի միացյալ ուժերը:

50. Լատերանի տիեզերական 12-րդ ժողովին, որը գումարվեց 1215 թ. նոյեմբերի 11-ին, մասնակցում էին 412 եպիսկոպոսներ, 71 արքեպիսկոպոսներ և 800 վանահայրեր ու վարդապետներ: Իննովկենտիոս՝ պապը ժողովին մասնակցելու հրավիրագիր ուղարկել էր նաև Հովհաննես Սոսի կաթողիկոսին, սակայն հայերի մասնակցության մասին տեղեկություն չունենք: Լատերանի ժողովը նախապատրաստելու էր խաչակրաց հերթական արշավանքը:

51. Լևոն Ա. թագավորն Անտիոքը գրավել է 1216 թ. փետրվարի 14-ին Տեառնդաուալի տոնին (սիստուան, էջ 502): Սամ. Անեցու մոտ հիշված է Հայոց Ուկ (1218), (էջ 147), Հմմտ. Ներսես Պալենցու վկայության հետ (սիստուան, էջ 502, ծանոթ. 2), Մյբատ Տառեգիրք, էջ 117:

52. Սուլեյ վկայությունը վերաբերում է Իկոնիայի սուլթան Իզզ-ագ-դին Քեյ-Քավուզ I-ի դեպի Կիլիկիա կատարած արշավանքին: Այդ մասին առավել մանրամասն գրում է Մյբատը («հարեգիրք», էջ 117), Սամ. Անեցու շարունակողը (էջ 146—147), և Միխ. Ասորին («Ժամանակագրություն», էջ 511—512), վերջին երկուսը Կապանի համար մղված կռիվները դնում են 1215 թ. ներքո: Ալիշանը այդ կռիվները մի տեղ նշում է 1217 թ. վերջերին (սիստուան, էջ 518), մի այլ տեղ՝ 1217 թ. մարտին (էջ 553), իսկ Օրմանյանը 1218 թ. («Աղագապառում», էջ 1392), Կապան քերդը գտնվում է Զահան գետի ափերին մոտ, Կիլիկիան Տավրոսի մեջ:

53. Բնագրում «թագազաւորն» ձևով:

54. Բնագրի շինեցաւ Զաստեւ Բլրին բերթանն փլեցոյցա հստվածը աղճատված է, և նրա ճիշտ ձևը պահպանված է տարեգրության հրատարակության բնագրում՝ «շինեցաւ Զաստեւ Բլրին բերդ Դամբլեց» (էջ 82—84): Այս բերդը լատինացիք կոչել են Castellum peregrino-ում, որը գտնվում է ծովափին, Կարմեղ լեռան հարավ-արևմտյան մասում: Մարտինոս Լեհացին Զաստեւ Բլրի կասուցման և տեղադրության մասին հաղորդում է հետևյալը. «ընդ այսմ ժամանակի (1208—1212 թ. թ.— Վ. Հ.) թաղաւորն Ունկարոյ և տուկն Օստրիոյ բաղում զօրօք դնացեալք խաչայտդեստ եղեալք ի յաշխարհն սուրբ: Եւ գնացեալ մինչ ի Յակուրն կոչեալ տեղի և ի լեռոն Թափօր և անդ ի տեղի պատշաճաւոր շինեցին շէնակ և կոչեցին յիւրեանց անունն Զաստէլ Բէլէկրին. և ետուն զայն, զկնի դարձին իւրեանց, եղբարցն Դամբլուն» (սՁԵԱ. Մ 2037, էջ 122բ):

55. 1218 թ. հերցոգ Լեոպոլդ Ավստրիացին խաչակիրների զորքով հարձակվեց Եփատոսի վրա և հաջողությամբ պաշարեց Դեմիտտը, որը խաչակիրները գրավեցին 1219 թ., բայց երկու տարի հետո՝ 1221 թ. մամլուկները կարողանում են նորից ետ գրավել:

56. Բնագրում «ապայնոց» ձևով:

57. Կաստիլիայի թագավոր Ալֆոնս IX, որը կոչվում էր Բարի (Bon) նա վախճանվել է ոչ թե 1218 թ., այլ 1214 թ.: Բնագրի «Ալֆոնս ալպոնն», առաջ է եկել Alphonse le Bon-ից:

58. Տես վերևում ծանոթ. 55:

59. Հեթում Բ-ն ճիշտ չէ, Ֆիլիպ Ավգուստ II-ը մահացել է 1222 թ.: Հաջորդը՝ որդին Լուգովիկոս VIII-ը թագավորել է 1223 թ. մինչև 1226 թ.:

60. Հմմտ. Միխ. Ասորի «Ժամանակագրություն», էջ 515—516:

61. Մեղ համար անհասկանալի պատճառով չեն Ա. թագավորի մահը կրկնված է, ընդ որում վերջին վկայությունը ճիշտ չէ:

62. Տես վերևում ժանոթ. 55:

63. Բնագրի «զԱֆն» կարծում ենք աղճատված է և պիտի լինի Պաֆոս, վերջինս բաղաբ է Կիպրոս կղզու արևմտյան ափին:

64. Բնագրի «Մունիորտին» աղավաղված ձևն է «Մունտֆորտի» Վերջինս բերդ է և գտնվում է Հայֆայից և Կարմեղ լեռից հյուսիս-արևելք: Դյուլորի կարծիքով խոսքը վերաբերում է Բերդի վերականգնմանը:

65. Հեթում Բ-ի խոսքը հավանաբար վերաբերում է Դամասկոսի էյուբյան իշխող Մուադզամ Եերեֆ-ադ-գին Իսայի (1218—1227 թ. թ.) մահվանից հետո տեղի ունեցած կոիվներին, որի ժամանակ վերջինիս որդի Նասիր Սալահ ադ-դին Դավուդի վրա հարձակվեցին նրա հարևան իշխանները և խլեցին Դամասկոսը 1229 թ. (Հմմտ. Мюллер, Ист. Исл. т. III, стр. 177). Բնագրի «Փուրեբտին» բառը թերևս Նուր-ադ-դին անվան աղճատումն է:

66. Հեթում Բ-ն ակնարկում է Յրիդրիի 11 կայսրի և եգիպտական սուլթան Մելիք-էլ-Ջամելի (1218—1238 թ. թ.) միջև կնքված դաշինքը, ըստ որի կայսրին հանձնվեց Երուսաղեմը, Բեթղեհեմը մինչև Յաֆա: Համաձայն դաշնագրի խաղաղությունը տևելու էր 10 տարի և վեց ամիս (Տես նաև Միխ. Ասորի «Ժամանակագրություն», էջ 524):

67. Հեղինակը նկատի ունի հավանաբար Նասիր Դաուդ Քարաբցու հարձակումը Երուսաղեմի և շրջակայքի վրա, որը տեղի ունեցավ 1239 թ., Յրիդրիի 11 կայսրի և Մելիք-էլ-Ջամելի միջև կնքված դաշինքից տասը տարի հետո:

68. Կարծում ենք խոսքը վերաբերում է Նասիր Դաուդ Քարաբցու, Սալիխ Իզմայիլ Դամասկոսցու և խաչակիրների դաշինքին, որն ուղղված էր Եգիպտոսի մամլուկների դեմ: Երբեք չը բաղաբ է Հորդանան գետի աջ ափից մոտավորապես 10 կմ. արևմուտք, գետաբերանից բավական հեռու:

69. Խոսքը վերաբերում է ոչ թե Բաշուի արշավանքին դեպի Փ. Ասիա, այլ դաշնակիցների (տես ժանոթ. 68) և եգիպտական սուլթան Սալիխ Նեշմ ադ-դին էյուբի կոիվներին, Երկու բանակների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1244 թ. Գազզա բաղաբի մոտ, որտեղ դաշնակիցները չախչախվեցին և եգիպտացիները գրավեցին Երուսաղեմը, 1245 թ. Դամասկոսը, 1246 թ. Բաալբեկը, 1247 թ. Ասկալոնը և Տիվերիադան:

70. Հմմտ. Սմբատ, էջ 123—124: Պոականա և Քարամուտ բերդեր են Սելեկիայի շրջանում:

71. Հեղինակը նկատի ունի Իկոնիայի սուլթան Ղիաս-ադ-դին Քել-Խոսրով 11-ին, որն իշխել է 1236—1245 թ. թ. ըստ լեն-Պուլի:

72. Նավահանգիստ Միչերկրականի արևելյան ափին, Ալեքսանդրետայից հարավ: Թուրքերն այն կոչել են Արսուս-Պուճաղի: Հնում կոչել են Հոսոսոս:

73. Իննոկենտիոս IV պապի (1243—1254 թ. թ.) անվան աղավաղումն է (Հմմտ. Афанасий - Успенский «История Виз. империи» т. III, ст. 433):

74. Հմմտ. Սմբատ, էջ 124: Հեթում Բ-ի վկայությունը երկու տարով ետ է իրականից:

75. Խոսքը վերաբերում է եգիպտական սուլթան Սալիխ Նեշմ-ադ-դին էյուբի (1240—1249 թ. թ.) գրավումներին (տես ժանոթ. 69): Բնագրում նշված երկու բաղաբները գտնվում են Միչերկրականի արևելյան ափին: «Չապարին» կարծում ենք Տիվերիադա բաղաբն է, որը Ասկալոնի հետ միասին Սալիխ Նեշմ-ադ-դին էյուբը գրավել է 1247 թ.: Սակայն ոմանք Պապարին նույնացնում են Աֆրիկայի հետ (Հմմտ. Զեո. № 7141, էջ 274 թ.):

76. Խոսքը վերաբերում է ֆրանսիական թագավոր Լուդովիկոս IX-ին, որն իշխել է 1226—1270 թ. թ.: Այս և հետագա մի քանի վկայությունների մեջ հեղինակն ակնարկում է խաչակիրների VII արշավանքը: Կիպրոսը խաչակիրները գրավել են 1248 թ. սեպտեմբերին:

77. Լուդովիկոս IX-ը Դեմիստոլը (Տամիաթ) գրավել է խաչակիրների VII արշավանքի ժամանակ 1249 թ. հունիսի 6-ին:

78. Լուդովիկոս IX-ը 1249 թ. հունիսի 6-ին Դեմիստոլը գրավելուց հետո շարժվեց առաջ և 1250 թ. մոտեցավ Մանսուր բաղաբին: Մինչ այդ խաչակիրների ուժերը թուլացել էին, այդ պատճառով Լուդովիկոս IX-ը ստիպված նահանջեց դեպի Դեմիստոլ: Ճանապարհին եգիպտացիք նրան գերեցին, սակայն Դեմիստոլ բաղաբը ետ վերադարձրեց, որպես փրկավճար և ազատվեց գերությունից: Հեթում Բ-ի վկայությունը, թե փրկավճար հանձնվել է 100 000 արծաթե մարկ, կարծում ենք ճիշտ է, որովհետև եգիպտացիք միայն Դեմիստոլի ետ ստացումով չէին

րովարարվի, քանի որ Լուդովիկոս IX-ի գերեզմանը հետո, այդ կարող էին հեշտությամբ ետ վերցնել, ըստ երևույթին Լուդովիկոս IX-ը գերեզմանից ազատվելու համար վճարել է 100 000 մարկ, ինչպես և Դեմիետրիոսը:

79. Խոսքը Սիգոն նավահանգստի մասին է, որը գտնվում է Միջերկրականի արևելյան ափին, Տյուրոսից հյուսիս:

80. Վ. Արևելյան շեթումի տեսակցությունը Մանկու դանի հետ դնում է 1252 թ. ներքո (էջ 195), իսկ Կ. Գանձակեցին 1255 թ. (էջ 350—357):

81. Ուղիղ ձևն է Մուսանդին, բերդ է, գտնվում է Փ. Ասիայում՝ Հերակլեա կամ Դոակլի րազարի մոտերքում:

82. Սմբատը շեթում Ա-ի անդրանիկ որդի Լեոնի ասպետ կարգելը նշում է 1259 թ. Մունգաս բերդի գրավման տարում (էջ 124):

83. Եթե խոսքը վերաբերում է աղանդավորների կենտրոն Ալամութին, ապա այն Հուլիան գրավել է 1256 թ. դեկտեմբերի 15-ին (Рашид-ад-дин «Сборник летописей», т. III, Москва-Ленинград, 1946, стр. 31): Տես վերևում էջ 59, ծանոթ. 62:

84. Հմմտ. Սմբատ, էջ 124: Մունգաս կամ Մինդոս բերդը գտնվում է Լամբրոնի հյուսիս-արևմտյան ուղղությամբ, Տավրոսի մեջ, Խոճա գետի ձախ ափին գտնվող Ղարա-Ցուսուֆ գյուղից հարավ («Սիսուան», էջ 177): Մունգաս բերդի համար կոիվներ մղել է Իկոնիայի սուլթան Ռուկն ադ-դին Ղիթ-Արսլան IV-ը, որը իշխել է 1267—1267 թ. թ. Մունգաս բերդի համար 1259 թ. մղած կոիվների մասին րավական մանրամասն վկայություն մեջ է բերում Ալիշանը «Սիսուան»-ում (էջ 177—178), ըստ որի այդ կոիվները և ապա Մունգաս բերդի գրավումը տեղի է ունեցել 1259 թ. հուլիս ամսին:

85. Խոսքը վերաբերում է Թաթուրական լեռան ստորոտում տեղի ունեցած հայտնի ճակատամարտին: Այս մասին ավելի մանրամասն պատմում են Վ. Արևելյան, էջ 199—200, Կ. Գանձակեցին, էջ 371—373, Մաղաբիա արեղան, էջ 35—36 և ուրիշները: Միև. Ալիշանցին (էջ 68) այդ ճակատամարտը սխալմամբ նշում է 1261 թ. ներքո: Եզիպտական ղորբին առաջնորդում էր սուլթանն անձամբ՝ Մուզաֆֆար Սելջուկ-ադ-դին Կուսուդը (1259—1260 թ. թ.):

85ա. Նախագահարար օրինակում հավանաբար եղել է «Դանբուլուն»:

86. Խոսքը վերաբերում է Միխայիլ Պալեոլոգին (իշխել է 1261—1283 թ. թ.), որը դաշինք կնքեց ճենովացիների հետ Կոստանդինուպոլս լատին կայսրներից ետ նվաճելու համար: 1261 թ. հուլիսի 25-ի գիշերը, Միխայիլ Պալեոլոգի բանակն, Ալեքսեյ Սարատիդուպոլի ղեկավարությամբ, մոտենում է Կոստանդինուպոլսի պարիսպներին, նրանք անաղմուկ մտնում են քաղաք և դրավում այն, համարյա առանց դիմադրության: Բյուզանդական լատին կայսր Բալդուին II-ն իր կլանը փրկեց էվբելյա փառլիլով: Այս հաղթանակից հետո, Միխայիլ Պալեոլոգը 1261 թ. օգոստոսի 15-ին, հանդիսավոր կերպով մտավ Կոստանդինուպոլիս և թագադրվեց Սոֆիայի տաճարում:

87. Ըստ Ալիշանի Կոստանդին պայլը մահացել է 1263 թ. փետրվարի 24-ին («Սիսուան», էջ 554): Հմմտ. Սամ. Անեցի, էջ 151: Մաղաբիա արեղան կարծում է, թե Կոստանդին պայլը մահացել է Հուլիուսի և նրա կնոջ մահվան տարում (էջ 37), իսկ վերջիններս, ինչպես հայտնի է, մահացել են 1265 թ.:

88. «Ջիսարամանն» անունը Կարամանիա (նաև Լարանտա) տեղանվան հնչյունափոխված ձևն է: Այն գտնվում է Իկոնիայից հարավ-արևելք և Իսավրիայից արևելք: Կարամանիա (ըստ մեր աղբյուրների խարաման) կոչվել են նաև այդ վայրի իշխողների տոհմը: Մանիոն բերդ է և գտնվում է Կարամանիայի արևելյան մասում: Մանիոնի գրավման մասին Ալիշանը ընդարձակ մեջբերում է կատարել արքունի պատմիչից («Սիսուան», էջ 293—294): Ալիշանը Մանիոն բերդի պաշարման սկիզբը համարում է 1259 թիվը, իսկ գրավումը՝ 1262 թ. (նույն տեղ, էջ 294):

89. շեթում Ա-ի որդի Լեոնը (ապագա Լեոն Բ) ամուսնացել է Կոստանդին Լամբրոնացու որդի՝ շեթումի դստեր՝ Աննայի հետ: շեթում Բ-ի վկայությամբ հենց այդ ժամանակ էլ Լամբրոնը միացվել է արքունիքին:

90. Բնագրի «խալէ»-ն միջնադարում գործածվող իտալերեն և ֆրանսերեն galere բառի հնչյունափոխված ձևն է, որը նշանակում է ուղևորանավ:

91. Բնագրի «թարիթն» բառը հավանաբար հունարեն τριρετης (լատ. triremis) «երեք կարգի թիակներով ուղևորանավ»-ի հայկական ու-ճիշտ արտասանությունն է:

92. Բիթ=Բիթլիք, քաղաք=հին Ապամեյան, գտնվում է հյուսիսային Միջագետքում, Ուրֆայի և Մերդինի միջև:

93. Կոստանդին պալլի որդիներից մեկը, որն իր և Ղըբայր Հեթում Ա-ի դահ բարձրանալուց հետո ստանձնեց պալլուքյան պաշտոնը և Կոռիկոսը: Սմբատի հաղորդմամբ Օշինը մահացել է 1263 թ. (էջ 124), որն անշուշտ սխալ է: Ալիջանն Օշինի մահը մի դեպքում նշում է 1265 թ. («Սիսուան», էջ 193), մի այլ դեպքում՝ 1264 թ. դեկտեմբերի 26 (նույն տեղ, էջ 555): Սույն վկայությամբ մեջ Հեթում Բ-ն հաղորդում է մահվան օրն՝ ուրբաթ, և իսկապես 1265 թ. դեկտեմբերի 25-ն ուրբաթ է:

94. Մառիի ճակատամարտում եգիպտական ղորթին առաջնորդում էր էմիր Իզզ-ագ-դին Իդան, որի մականունն էր Սեմ-էլ-մոտ (արաբ. նշանակում է «մահացու թույն») կամ Սեմ-էլ-արաբ (արաբ. «արաբների թույն»): Հեթում Բ-ն գործածում է «Սմընլոթ» կամ «Սմլոթ», իսկ Վ. Արևելցին «սմլոթ» (էջ 214): Վ. Արևելցու պատմության տարբերակներից մեկը պահել է «Սմլոթ» ձևը, (էջ 214, ծանոթ. 2):

95. Խոսքը վերաբերում է Մառիի նշանավոր ճակատամարտին, որտեղ սպանվեց Հեթում Ա-ի որդին՝ Թորոսը, իսկ Լևոնը գերվեց: Հմմտ. Սամ. Անեցի, էջ 151, Մաղաբիա աբեղա, էջ 39—40, Վ. Արևելցի, էջ 213—214, Հեթում Պատմիչ «Պատմութիւն թաթարաց», էջ 52, և ուրիշներ: Մխ. Այրիվանեցին Մառիի ճակատամարտը նշում է 1261 թ. ներքո (էջ 68): Ալիջանի հաշվումներով ճակատամարտը տեղի է ունեցել 1268 թ. օգոստոսի 23-ին երկուշաբթի օրը (Վ. Արևելցին հիշում է «մերձ յաշնան եղանակն», էջ 213): Այս մասին, Հեթում Ա թագավորի եղբայր, Հովհաննես եպիսկոպոսն ահա թե ինչ է գրում իր մի հիշատակարանում. «բայց գրեցաւ սա (ժողովածուն— Վ. Լ.) ձեռամբ Ստեփաննոս գրչի մերձ ի բերդն Բարձր կոչեցեալ ի գառն և յանբարի և յոյժ վշտալի ժամանակի, զի վասն բազում մեղաց մերոց արքայց աստուած մեզ դարկութեան բաժակն, զի բոնօրն Ծպիպտոսի Պլտուխտարն, վերջինս նաբուգոդոնոսոր, ի թվին Հայոց ԶԺԵ (—1266) բազում զարօք քրիստոսատեաց տաճկաւքն զաշխարհս Կիլիկո սրով և հրով սպառեաց. ղորդիս եղբօրն իմո, զբարեպաշտ թագաւոր Հեթմոյ զանդրանիկն Լևոն, որ էր պարոն Հայոց, դերի ունի ամ մի է, և կրտսերն Թորոս, զլցեալն ամենայն բարէձեռութեամբ, չսպան յոյով հոմազնեա նիզակակցօք ի Մառի, որոց տէր ողորմեցի: Եւ զարբայանիստն Սիս մեծօն Սոփիօ և զամենայն սահմանս նորա մինչև յԱտանտ հրձիգ արար, անթիւ էսպան, բաղումս գերեացա... (Ձեռ. № 4243, էջ 222բ):

Մառիի բերդ է, այն գտնվում է Սարվանդաբարից կեսօրյա հետիոտն ճանապարհ դեպի արևելք, Ամանոս կամ Սև լեռան լանջին:

96. Հմմտ. Ստ. Օրբելեան «Պատմութիւն տանն Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 441, Հեթում Պատմիչի հիշատակարանը (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948 թ., № 10, էջ 72) և «Պատմութիւն թաթարաց», էջ 73, Սմբատ էջ 125, և ուրիշներ:

97. 1269 թ. երկրաշարժը մեծ ավերածություններ պատճառեց Կիլիկիայում: Այդ մասին Ալիջանը մեջ է բերում մի ժամանակակցի վկայություն («Սիսուան», էջ 8): Համուրը բերդ է, գտնվում է Թիլ-Համտունի արևելյան կողմում:

98. Լուդովիկոս IX-ը 1270 թ. մարտին արշավեց Թունիս, այն նվաճելու նկատառումով, սակայն այդ չհաջողվեց, որովհետև զորքի մեջ հիվանդություն ընկավ և շատերը մահացան: Ենուտով ինքն էլ հիվանդացավ և օգոստոսի 25-ին մահացավ: Լուդովիկոս IX-ին հաջորդեց Ֆիլիպպ III-ը, որն իշխել է 1270—1285 թ. թ.:

99. Սույն անունը կարծում ենք էգուարդ անվան աղճատված ձևն է, եթե ճիշտ է սա, նշանակում է խոսքը վերաբերում է անգլիական թագավոր Հենրիխ III-ի (1216—1272 թ. թ.) որդի էգուարդ I-ին, որը թագավորել է 1272-ից մինչև 1307 թ.։ Այս մասին Մարտինոս Լեհացին գրում է. «Իսկ Օտուարդ որդի թագաւորին Անկլիոյ միայն իւրօքն գնալո ի յաշխարհն սուրբ յազօթաւորութիւն. և հասեալ յԱքայ, եկաց անդ ամս Բ (2) և յերրորդում զարկին գնալ հաշիշքն Ե (5) դանակ ի բերդն Աքայո, բայց ողջացաւ դարձեալ և յայնմ ամին գնաց յաշխարհն իւրաւ (№ 2037, էջ 123ա):

100. Հեղինակը նկատի ունի Գրիգորիս X-ին, որը պապական աթոռը զբաղեցրել է 1271—1276 թ. թ. և որը 1274 թ. Լիոնում հրավիրեց եկեղեցական ժողով, խաշակրաց նոր արշավանք կազմակերպելու նպատակով, բայց հաջողություն չունեցավ:

101. Բնագրում գրված է «Սուլովոնին», նկատի ունենալով, որ այդ գրչագրական սխալ էր, ուղղեցինք այն: Մուլտն բերդը (կամ Մլուն դաշտ) գտնվում է Լամբրոնից հյուսիս և Բարձրբերդից հարավ-արևմուտք: Մուլտնի իշխան սիր Լևոնը Ապլղարիպի հետ ապստամբեցին Լևոն Բ-ի դեմ, սակայն ձերբակալվեցին և հանձնվեցին թաթարներին Փ. Ասիական կառավարիչ Փարվանային: Ալիջանը սույն վկայությունը մեջ բերելով, այն վերաբերում է ոմն ժամանակագրի («Սիսուան», էջ 142, ծանոթ. 1), նշելով 1271 թ. ներքո:

102. Այս մասին Սմբատն իր «Տարեգրքում» ոչինչ չի հիշում: Մինչդեռ «Սիսուանի» ժամանակագրական աղյուսակում Ալիշանը հիշում է այն (էջ 555):

103. Տես ծանոթ. 100:

104. Տես Սմբատ, էջ 125: Սամ. Անեցու ժամանակագրության շարունակողը սույն գեպըը նշում է Հայոց 726 (=1277) թվի ներքո (էջ 152):

105. Խեղեփքը համապատասխանում է հուն. «Ἡμισυῖα» բառին և նշանակում է համամաս, կես (սնորքառագիրը հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 939): Այստեղ պետք է հասկանալ երկվորյակ իմաստով:

106. Բնադրի «Ութիֆանօն» բառը կարծում ենք աղճատումն է Ստեփանիա անվան: (Հմմտ. «Սիսուան», էջ 555): Ստեփանիան հայտնի է նաև Թեֆանոյ անվամբ (հմմտ. Աճառյան «Հայոց անձնանունների բառարան», հ. Բ, էջ 309, № 9):

107. Տես վերևում, էջ 61, ծանոթ. 91: Բնագրում «կատարեցտն յունաց բաղումք» ևրկորոգ բառն աղճատված է և ուղղեցինք «կատարեցան յանօրինաց բաղումք»:

108. Բնագրում սույն հատվածի առաջին երկու բառը պահպանված է թթագատրքմունքն տարեցին» ձևով, որն անշուշտ աղճատված է: «Սիսուան»-ում պահված մի վկայությամբ, որը մեր կարծիքով վերցրած է առաջարկվող տարեգրության սկզբնական բնագրից, ուղղեցինք այն: Այդ վկայությունն Ալիշանը վերագրում է մի ոմն ժամանակագրի, ուր կարդում ենք «ՉԼԲ (=1283) թուրքմանք տիրեցին Մանիօնին, յետ եօթն ամի պաշարման նորա» (էջ 547): Խոսքը հավանաբար վերաբերում է Իկոնիայի սուլթան Ղիյաս-ադ-դին Մասուդ II-ի նվաճմանը:

109. Ռաշիդ-ագ-դինը բավական մանրամասն է նկարագրում Աբաղայի մահվան հանգամանքները (նույն տեղ, էջ 97): Դյուլորիեի մոտ (էջ 488, ծանոթ. 1) Աբաղայի մահը նշված է 1202 թ. ապրիլի 1, տարեթիվն անշուշտ տպագրական սխալ է: Մանկու Թեմուրը, համաձայն Ռաշիդ-ագ-դինի մահացել է ապրիլի 26-ին, Դյուլորիեի ավելացնում է, որ Մանկու Թեմուրը թունավորվել է վեզիր Ալա-ագ-դինի դրդումով, Զեզիրեի հրամանատար Մուսին-Աղայի կողմից (էջ 488, ծանոթ. 1):

110. Բնագրում «փափումն» ձևով:

111. Անեմոս՝ բերդ, համանուն հրվանդանի վրա: Հնում կոչվել է Անեմուս կամ Անեմուրիոն («Ανεμούριον»): Անեմուս հրվանդանը Կիլիկիայի ամենահարավային մասն է, այն գտնվում է Քարազորոսից հարավ-արևելք և Քեոթյուեճն շախից արևմուտք: Ալիշանի հաղորդմամբ («Սիսուան», էջ 322) Լևոն Ա թագավորի մահից հետո Անեմուսը, Ալայան գրավեց Իկոնիայի սուլթան Ալա-ագ-դին Քալ Քուրատ I-ը (իշխել է 1219—1236 թ. թ.): Հեթում Բ-ն սուլյն վկայությամբ նկատի ունի Անեմուտի ետ գրավումը Լևոն Բ թագավորի ժամանակ:

112. Սարգիս բահանա Սսեցի պատմիչին վերագրված ժամանակագրության (IV) վկայության համապատասխան Կեռան թագուհին մահացել է օգոստոսի 9-ին: Բնագրի «լուգոստոսի ԻՐ» հատվածը թերևս կարելի է սրբագրել «լուգոստոսի Ի Թ» (=9)» ձևով:

113. Ռաշիդ-ագ-դինի համաձայն Աճառյան, նույն ինքը Թեկուդար, Հուլիանյի VII որդին, Քուսուլ խաթունից, սպանվել է 1284 թ. օգոստոսի 10-ի գիշերը (էջ 111), իսկ Արղունը գահ է բարձրացել հետևյալ օրը՝ օգոստոսի 11-ին (էջ 113):

114. Ֆրանսիական թագավոր Ֆիլիպպ III Քաշն իրականում մահացել է 1285 թ. և նրան հաջորդել է Ֆիլիպպ IV Գեղեցիկը 1285 թ.:

115. Լաոգիկե, նավահանգիստ Անտիոքի լատինական իշխանության հարավ արևմտյան մասում:

116. Ռաշիդ-ագ-դինի համաձայն Արղուն դանը մահացել է 1291 թ. մարտի 10-ին (էջ 127): իսկ եղբայրը Քեյ-խատուն հաջորդել է 1291 թ. հուլիսի 23-ից (էջ 130):

117. Հմմտ. Հեթում: Պատմիչի հիշատակարանը (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948 թ., № 10, էջ 72, 73), ներթելում՝ IV ժամանակագրություն, իսկ Անանուն ժամանակագրության (Երևան, 1940 թ.) համաձայն Ալֆին Տրապունիսը գրավել է 1288 թ. ապրիլի 17-ին (էջ 26), այստեղ տարեթիվը սխալ է, իսկ ամսաթիվը թերևս ճիշտ չէ:

118. Աշրաֆ Սալախ-ագ-դին խալիլ, իշխել է 1290—1293 թ. թ.:

119. Հմմտ. Հեթում: Պատմիչի հիշատակարանը (նույն տեղ, էջ 67, 72), որտեղ նշված է նաև գրավման օրը՝ մայիսի 18: Սանուտուն հաստատելով Հեթում Բ-ի վկայությունն ավելացնում է՝ ուրբաթ օրը, սակայն Դյուլորիեի վերջինս ուղղելով, առաջարկում է «կարգա երեքշաբթի» («lis. mardi») իրականում 1291 թ. մայիսի 18-ը եղել է ուրբաթ, իսկ երեքշաբթին կրկնի մայիսի 15-ին կամ 22-ին: Ինչպես դժվար չէ հետևեցնել, Դյուլորիեի ուղղումը ստույգ չէ և

Սանուտոն ճիշտ է: Իսկ Մաքրիզն Ակկայի գրավումը նշում է 1291 թ. մայիսի 12-ին, ուրբաթ օրվա ներքո: Իրականում 1291 թ. մայիսի 12-ը եղել է ոչ թե ուրբաթ, այլ շաբաթ, հետևապես եթե Մաքրիզի մոտ հաստատ է եւրոբաթի հիշատակությունը, նշանակում է ամսաթիվը պետք է ուղղել մայիսի 11 կամ 18: Անկասկած, ճիշտ է մայիսի 18-ը, որովհետև այն բացի Հեթում Պատմիչից և Սանուտոյից հաստատում է մի ուրիշ, երրորդ հեղինակ՝ Անանուն ժամանակագրության հեղինակը, ըստ որի Աշրաֆն Ակկան գրավել է 1290 թ. մայիսի 18-ին (էջ 26): Անանունի մոտ տարեթիվը մի տարով շուտ է նշված (հմտ. ծանոթ. 117):

120. Հմտ. Հեթում Պատմիչի հիշատակարանը (նույն տեղ, էջ 67—68, 73), որտեղ հեղինակը Հոռմկլայի գրավումը նշում է 1292 թ. հունիսի 28-ին, իսկ Սարգիս քահանա պատմիչ Սևցուն վերագրած ժամանակագրությունը՝ հուլիսի 28-ին:

Ժիշտը Հեթում Պատմիչն է, որովհետև արաբական հեղինակներից Աբուլ Մեհասի Տաղրի-բերդի պատմիչը «Երևելի աստղեր» աշխատության մեջ (Կահիրե, 1939 թ., հատ. VIII, էջ 12) վերահիշյալ դեպքը նշում է հիշրեի 691 թ. ուշաք ամսի 11-ին, շաբաթ օրը, 691 թ. ուշաք ամսի 11-ը համապատասխանում է 1292 թ. հունիսի 28-ին, և իսկապես այդ օրն էլ շաբաթ է:

Սույն տեղեկությունը ընկ. Հ. Նալբանդյանից ստանալու համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

121. Հեթում Բ-ն մի փսրը սխալվում է. Աշրաֆ Սալահ-ադ-դին Խալիլն սպանվելուց հետո, կարճ ժամանակով՝ մոտավորապես մեկ տարի, նրան հաջորդում է Նասիր Նասիր-ադ-դին Մուհամմադը: Վերջինս գահազրկվեց 1294 թ. և հաջորդեց Ագիլ Զիյն-ադ-դին Քիթբուղան, որն իշխեց մինչև 1296 թ.:

122. Բնագրում դրված էր «զթագաւորին» ձևով, առանց պատվի իմաստը մնում էր անհասկանալի, ուստի այն ուղղեցինք:

123. Սույն վկայության Ալիջանը կասկածանքով է վերաբերվում («Սիսուան», էջ 194, ծանոթ. 1), և այն վերադրում է XVIII դարի հեղինակ Մաղաբիա դպիր Ժեվհերիյան ժամանակագրին:

124. Բնագրում «յահ» ձևով. միտքը մնում է անիմաստ: Ուղղեցինք «հայ», որովհետև Նախագահության շարունակության մեջ հանդիպում ենք նման հատվածի «հայ և ֆիրանկ իշխանացն»:

125. Համաձայն Ռաշիդ-ադ-դինի Քեյ-Խաթուն սպանվել է 1295 թ. մարտի 24-ին (էջ 137, Դյուլդրեի հաշվումներով՝ 1295 թ. ապրիլի 23-ին («Recueil.» t. 1er, p. 490, note 1), իսկ հաջորդ Բալդու դանը՝ 1295 թ. հոկտեմբերի 4-ին (էջ 165), որին հաջորդում է Ղազան դանը: Դահակյական սուլն կոթվները մանրամասնորեն նկարագրում է Ռաշիդ-ադ-դինը:

126. Այս դեպքերի մասին մանրամասն խոսում է Ռաշիդ-ադ-դինը (էջ 170—177):

127. Խոսքը վերաբերում է 1296 թ. Կուրցուլի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտին: Հեթում Պատմիչի սուլն վկայությունը ստույգ չէ, որովհետև համաձայն Պաքիմերի, շարդն այնքան մեծ էր, որ հարկ եղավ մեծ-մեծ փոսեր փորել դիակները թաղելու համար:

128. Ըստ Լեն-Պուլի Ագիլ Զիյն-ադ-դին Քիթբուղային հաջորդել է Մանսուր Հուսամ ադ-դին Լաշին 1296—1299 թ. թ. Համաձայն Աբուլ-Ֆեդայի և Աբուլ Մեհասի, Լաշին սուլթան հռչակվել է 1296 թ. նոյեմբերի 14-ին:

Բնագրի «և նստաւ սուլթան Հիւսամատինն Ալլին» հատվածից հետո տարեգրության մյուս բնագրերը շարունակվում են, այդ պատճառով վերջիններս ներկայացնում ենք առանձին, հաջորդ էջերում:

129. Հմտ. Սամ. Անեցի, էջ 155—156, Սմբատ, էջ 127:

130. Համաձայն Ալիջանի Օշինը մահացել է 1320 թ. հուլիսի 20-ին («Սիսուան», էջ 558):

131. Օրմանյանը հենվելով Սմբատի «Տարեգրքի» շարունակողի վկայության վրա (էջ 130) Կոստանդին Դ. Լամբրոնացու մահը դնում է 1326 թ. ներքո: Իսկ Ալիջանը՝ 1327 թ. ներքո («Սիսուան», էջ 558): Հմտ. Սամ. Անեցի, էջ 158:

132. Սամ. Անեցու «Մարցին եկն ի Կիլիկիայ և էառ զԱյաս» վկայությունը (էջ 168) կարծում ենք միևնույն դեպքերին է վերաբերում: Հմտ. Ներսես Պալենցի անթվական հիշատակությունը («Սիսուան», էջ 392), Սմբատ, էջ 129—130: Կովառա բերդը գտնվում է Զահան գետի ափին:

133. Նղիր, բերդ Կիլիկիայում: 1336 թ. գրավեց Հայկաի ամիրա Ալթուն-Բուղան: Այս մասին հետաքրքիր տեղեկություն գտնում ենք 1336 թ. Սոում ընդօրինակած ավետարանի հիշատակարանում, որտեղ կարդում ենք. «Յայսմ դառն և չար ժամանակիս (1336 թ.— Վ. Հ.) զոր

անւրէն ազգն իսմայէլաց տունն փարաւունի ի մեծ նեղութիւն և ի վտանգի կալան զաշխարհս Կի-
լիկեցոց և արշաւեաց զաւրաւր և էաւ զամենազարդ և զաստուածապահ բերդն զնղիւրն, նստելով
ի վերայ նորա բազում ժամ և անբեաց. և ապա եմուտ յերկիրս և ոչ բաղար և ոչ բերդ և գեղ
լեռանային և դաշտային վանաւրէյք և անապատք զամենայն մի ըստ միշտէ և ոչ մնաց տեղ
յերկիրս, որ անաւրէնքն թողին, որ շմտան և յոյժ զարս բազ լլումս սրով սպանին և եկեղեցա-
կանս՝ յուղիւն էրէց և արեղայ, վարդապետ և եպիսկոպոս, սարկաւազ և դպիր և անբաւ բրիս-
տոնեայս արք և կանայք տղայք և կուսանք տարեալ գերիս, զոր աւեր աստուած հատուցէ նոցա
ըստ իւրեանց գործոցն զփոխարէնն. և այս բաւական է՝ (Ձեռ. № 5786, էջ 339 ա և բ)։

134. Կոռիկոսի իշխան Օշին Պայլը և եղբայրը՝ Կոստանդին Գունդստաբլը, Հեթում Պատմիչի
որդիներն էին։ Լեոն Դ-ն նրանց սպանեց 1329 թ. հունվարի 26-ին։ Մանրամասնութիւնները
տես Սմբատի «Տարեգրքի» շարունակութեան մեջ (էջ 131)։

135. Չորանը Ղազան զանի զորավարներից էր։ Աբու-Սեյիդը գահ բարձրացավ մանկահա-
սակ, 12 տ. հասակում, որի խնամակալն էր Չորանը։ 1327 թ. Աբու-Սեյիդը դառնալով ինքնիշ-
խան, սպանում է Չորանին երկու որդիների հետ միասին (հմմտ. Justi „Iranisches Namen-
buch“ Marburg, 1895, p., 459)։ Չորանի մյուս որդին՝ Թեմուրտաշը, որը Փ. Ասիայի կառավարին
էր, լուր ստանալով այս մասին, փախում է Եգիպտոս, որտեղ սպանվում է Աբու-Սեյիդի
պահանջով (տես Мюллер „История ислама“ т. III, стр. 278)։ հմմտ. Ս. Անեցի, էջ 158, 167,
Սմբատ, էջ 130—131։

136. Օրմանյանի կարծիքով Հակոբ Անավարդեցին հրաժարվել է կաթողիկոսական գահից։
Մանրամասնութիւնները պարզ չեն, միայն ենթադրում են, որ այն կրոնական վեճի արդյունք
էր և Հակոբ Անավարդեցին դեմ էր Լեոն Դ-ի լատինամոլ բաղաբանութեանը (սկզբնապա-
տում, էջ 1558—1559)։

137. Համաձայն Ալիշանի Լեոն Դ-ն մահացել է (ըստ ոմանց սպանվել է) 1342 թ. օգոստոս-
ի 28-ին (սՍիսուան, էջ 559)։

138. Բնագրի «և փուց գորինկէս բերդին» հատվածը մի փոքր անկանոն է։ Այն կարելի է
հասկանալ երկու կերպ՝ կամ «բերդին» բառի «ի»-ն ավելորդ է, այն դեպքում «գորինկէս»-ը
կլինի բերդի անունը և կամ «պորինկէս» բառով կոչել են բերդի որևէ մասը, որն, այսինքն՝
«բերդի պորինկէս»-ը երկրաշարժից փլվել է։

139. Բնագրում «ուսնպէճ» ձևով։ Բառանշատումը կատարեցինք «ու Մնպէճ»։ Այս ձևը
գտնում ենք նաև Մ. Ուռհայեցու մոտ (էջ 62)։ Վերջինս հիշելով բյուզանդական կայսր Ռոմա-
նոս Դիոգենի 1069 թ. արշավանքը գրում է. «և իջեալ բանակ հարկանէր ի վերայ անուանի
բաղաբին՝ որ կոչի Մնպէճ, մերձ ի Հալպ բաղաբ, որ էր հռչակաւոր բաղաբ Տաճկաց...» (էջ
191)։ Մի. Ասորու մոտ այդ նույն բաղաբը կոչվել է նաև Երապոլիս, նա գրում է. «Եւ յետ
բակելոյն ի ներաւովէ Մնքէճ բաղաբի՝ շինեցաւ վերըստին յԱթուրացւոցն. և եղաւ անդ կուռքն
Կանանայ։ Եւ կոչեցաւ Յարապոլիս, (Յերապոլիս) որ Թարգմանի բահանայից բաղաբ վասն
բրմացն կախարդացն, որոց աղանդին աշակերտեցաւ յետոյ Բարդեթան» (էջ 62—63)։
Մնպեջ=Երապոլիսը գտնվում է Հալեպից հյուսիս արևելք։ Ըստ Յակուտի Մանրիշը (Մնպեջ)
հարուստ և բարեբեր բաղաբ է, ջրապատված բարաչեն պարիսպով, Հալեպից հեռու է 10 փար-
սաղ, իսկ Եփրատից՝ 3 (սՍիտաբ Մոշամ էլ Բուդան, Լայպցիգ, 1924, հրատ. F. Wüstenfeld-ը,
հատոր IV, էջ 654—655)։ Մնպեջ=Երապոլիս բաղաբն ավելի ուշ կոչվեց Չմշկաժագ,
բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկի ծննդավայրը լինելու պատճառով։

140. Ինչպես այս, այնպես էլ հաջորդ մի քանի վկայութիւնների մասին որևէ այլ տեղեկու-
թիւն մեզ հայտնի չէ։

141. Սրանից հետո, Ք բնագրում գտնում ենք բժշկական մի փոքրիկ հատված՝ «թէ մարդ գո-
ղարգել լինի»։ Այս հատվածը գրել է ժողովածուի գրիչ՝ Ստեփանոս բահանան։ Այդ հատվա-
ծից հետո, գուցե և գրչի կողմից, հետագայում ավելացված է. «ԳԴ (=1355) տէր Մխիթար
փոխեցօ ի Քրիստոս ու լանտուլցիքն զտէր Յակոբ յաթոռ իւր» հատվածը։

142. Հեթում Պատմիչին վերագրված ժամանակագրութեան Ավգերյանի հրատարակութեան
բնագիրը վերահիշյալ հատվածից հետո ընդհատվում է։

143. Խոսքը վերաբերում է Օշին թագավորին, որը գահ է բարձրացել Հեթում Բ-ի և Լեոն
Դ-ի 1307 թ. սպանութիւնից հետո, 1308 թվին (սՍիսուան, էջ 271, 557) և մահացել է 1320 թ.
հուլիսի 20-ին (Ժանոթ. 130)։

144. Հեղինակը նկատի ունի Լեոն Դ-ին, որին ըստ Սմբատի «Տարեգրքի» շարունակողի (էջ

128) թագավոր օծել են 1321 թ. խնամակալությամբ Հեթում Պատմիչի որդի Օշին պալլի լևոն Գ-ի մահվան տարեթիվը տես ծանոթ. 137:

145. Խոսքը վերաբերում է Կոստանդին Գ. թագավորին, որը դահին մնացել է ընդամենը մեկ տարի՝ 1342—43 թ. («Ազգապատում», էջ 1905): Ալիշանը սրան հիշում է որպես թագապահ մինչև եղբոր Գվիդոնի գալը, որը թագավոր էր ընտրվել 1342 թ. («Սխուան» էջ 559):

146. Խոսքը վերաբերում է Գվիդոն Լուդինյան թագավորին, որն իշխել է ըստ Ալիշանի 1342 թ. մինչև 1344 թ. («Սխուան», էջ 559): Լատինամուլ էր, ուստի հայ իշխանները սպանեցին: Հմմտ. Կ. Յ. Բասմաչեան «Լեւոն Ե Լուսինեան վերջին թագավոր Հայոց», 1908, Պարիս, էջ 13, 21:

147. Կոստանդին Բ թագավոր, Լևոն Գ-ի ազգականը, համաձայն Ալիշանի իշխել է 1345 թվից («Սխուան», էջ 559) մինչև 1363 թ. (նույն տեղ, էջ 560): Հմմտ. Բասմաչեան «Լեւոն Ե Լուսինեան...», էջ 21: Բնագրում Կոստանդինի թագավորության տարիները բաց է թողնված, Այս հատվածից հետո ընդհատվում են տարեգրության ԵԵ տարբերակները

148. Սույն դեպքերի մասին 1374 թ. ընդօրինակած ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «և դարձեալ ի յամին թուականութեանս Հայոց ՊԻԳ (=1374) առաւ Սիս ի քրիստոնէից և էր յայն ժամանակն կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին Լոմբրոնացին, այր իմաստուն և հանճարեղ, և էր թագաւոր Հայոց Պարոն Լևոն, որդի Բրինձին, սա թագաւորեաց Հայոց ամիս է (7), սա վարեցաւ գերի յնգիպտոս, թագուհին իւրով և որդւով իւրովը, բայց մեծ թագուհին Հայոց Մարին: յնրուազէմ մեծաւ առաքինի ճշմարտութեամբ ամս...? և հանգեաւ ի Քրիստոս ի թուաբերութեան Պ... և ի յուլիս ամսոյ ԺԸ (18)... (անընթեռնելի) վասն զի յոյժ ողորմած էր և աղքատասէր, սա թաղեցաւ առաջի դրան սուրբ Յակոբայ...» (Մկրտիչ եպիսկ. Աղանունի «Միաբանք և այցելութիւն հայ նրուազէմի», 1929, նրուազէմ, էջ 170—171): Հմմտ. Չեռ. № 737, էջ 199բ: